Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

2(719)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

«Հայաստանը պետք է խոսի վերջապես:
Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլև էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար»:

Հովհ. Թումանյան. «Հայաստանը պետք է խոսի», 1917թ.

ԵՐԹԻ ԵԼԱՆՔ ՆՈՒՅՆ ԺԱՄԻՆ

1988թ. սկզբներին՝ 38 տարի առաջ սկսված Արցախյան հերոսական շարժումը մեր ժողովրդի պատմության փառավոր էջերից է. միասնական էինք բոլորս և պատրաստ տեր կանգնելու մեր հայրենիքի Արցախ հատվածին: Այսօր այլ իրավիճակ է. 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմում պարտվելուց հետո շատ բան է փոխվել: Այսօր շատերն են ասում՝ Արցախյան շարժումն արհեստածին էր, այն մեր վզին փաթաթեցին միջազգային հզոր կառույցները, Գորբաչովի «վերակառուցում»-ը և այլն: Այնուամենայնիվ, այս Շարժումը մեզ տվեց հայրենիք ճանաչելու, հայրենիքին տեր մնալու իրավունք: Ամենակարևորը՝ միասնական էինք: Այն ժամանակ, երբ շատերս էինք հրապարակում, խոսք էր գնում, որ նույնիսկ գողերն ու գրպանահատներն են գործադուլ արել, իսկ եթե որևէ մեկը փորձեր գողություն անել, խիստ կպատժվեր, պարզ է՝ ում կողմից:

Արցախյան շարժման բոլոր տարեդարձներին մեծ սիրով էի անդրադառնում, լուսանկարների ցուցահանդեսներ էի կազմակերպում, այդ փառավոր օրերի մասին հոդվածներ ու ակնարկներ գրում: 38 տարի առաջ փետրվարի 20-ին Ստեփանակերտում կայացավ Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի պատմական նիստը: Մարզային խորհուրդը որոշում կայացրեց Հայաստանի կազմ տեղափոխվելու համար միջնորդել Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի օրենսդիր մարմիններին: Նույն օրը հարյուր հազարավոր ցուցարարներ Երևանի օպերայի հրապարակում տեր կանգնեցին պատմական այս որոշմանը: Գիշերը շատերս այդ ցուցարարներից երթով անցանք Երևանի փողոցներով և առավոտյան նորից հրապարակում էինք: Տարեց Եղիշ քեռին, որն այդ օրերին դարձավ խորհրդանիշ, երթի մասնակիցներին կոչեց ֆիդայիներ: Մեծ էր երթի ազդեցությունը. հաջորդ օրերին բազմապատկվեց ցուցարարների թիվը, և ողջ հայությունը մեկ մարդու պես ոտքի ելավ:

Բոլորս էլ սկզբում հավատում էինք, որ Խորհրդային Միության «վերակառուցող» իշխանությունը, Կենտկոմի գլխավոր քարտուղարի ղեկավարությամբ, արդարացիորեն կլուծի մեր ազգային հարցը: Եվ այդ էր պատճառը, որ հրապարակով մեկ ԽՍՀՄ ղեկավարների, Լենինի ու Մարքսի նկարներն էին երևում ժողովրդի գլխավերևում՝ պահանջատիրական պաստառների հարևանությամբ: Սակայն հաշված օրեր էին պետք, որ հասկանանք՝ թուրքը մնացել է նույն թուրքը, խորհրդային ղեկավարությունը՝ նրան սատարողն ու տեր կանգնողը: Սումգայիթյան դեպքերն ալեկոծեցին մեզ, բայց առավել տրամադրեցին ու դարձան դաս: Արդեն միասնական էինք, մեզանից հանել էինք վախի զգացումը, այլևս զոհ չէինք, իսկ Արցախը լինել-չլինելու սահմանին էր կանգնած: Եվ մեր ժողովուրդը հաստատ մի համոզմունքի էր՝ տեր մնալ Արցախին և միավորել Մայր հայրենիքին: Ոչ մեկս չէինք կասկածում միացումին, և կայացավ մեր սրբազան երազանքը: «Միացում», «Արցախ». ամենաշատն այս բառերն էին հնչում հրապարակում, որն անվանեցինք Ազատության: Կայացավ միացումը բազում հայորդիների նահատակության գնով, կայացավ արցախահայության տառապանքի ու ոգու հզորության շնորհիվ: Կայացավ հայ մայրերի՝ իրենց որդիներին սրբազան պայքարի

մղելու շնորհիվ: Կայացավ Սփյուռքից եկած մեր հերոսների շնորհիվ: Նույնիսկ Սպիտակի ավերիչ երկրաշարժն արգելք չդարձավ մեր պայքարին, ընդհակառակը՝ դարձավ շարժիչ ուժ ու մարտի կոչեց նաև աղետի գոտուց շատերին: Արցախ-Մայր հայրենիք միացումը կայացավ պատերազմով. ճիշտ է, հազարավոր քաջորդիներ կորցրինք, հազարավոր վիրավորներ ունեցանք, հազարավոր խեղված ճակատագրեր, բայց մեր բազմադարյա պատմության ընթացքում բացառիկ գործ կատարեցինք՝ ազատագրեցինք ու թուրքից մաքրեցինք Արցախը, Հայաստանի Հանրապետության շատ տարածքներ: Տեր դարձանք նաև մեր պատմական հայրենիքի՝ թշնամու կողմից զավթված տարածքներն, որոնք հայաթափ եղան 18-20-րդ դարերի ընթացքում՝ հիմնականում մեր միասնական չլինելու պատճառով: Ամենակարևորը՝ ձեռք բերեցինք անկախություն ու պետականություն:

Բայց 2020-ի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը, որն անջատողականության արդյունք էր նաև, շատ բան փոխեց, ու այսօր կանգնած ենք անդունդի եզրին: Սթափվենք...

Վերջին շրջանում, իբր հավերժ խաղաղության դիմաց, որոշ քաղաքական գործիչներ, դրսից դրամաշնորհներ ստացած հասարակական կազմակերպություններ հարց են բարձրացնում՝ տարածքներ զիջել թշնամուն: Պետք է բոլորով իմանանք՝ թշնամին, եթե հնարավորություն ունենա, կոչնչացնի մեր ժողովրդին՝ մեր հող ու սահմանին տիրանալու համար: Ուրեմն՝ ընդհանրապես պետք է օրակարգից հանել տարածքներ զիջելու հարցը: Մենք հաղթեցինք 1994 թվականին, և թշնամին զինադադար աղերսեց: Այսօր շնորհավորենք մեկս մյուսին մեր զարթոնքի, զոհի կարգավիճակից ելնելու, համազգային կամքի ու ոգու ուժի, պայքարի մարտիկ դառնալու օրվա առթիվ և տեր մնանք հերոսների արյամբ գծված սահմանին Հայոց:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ…
Վահան Տերյան

Նահրյան երգչի այս ձևակերպումը, անշուշտ, ապացույցն է այն իրողության, որ պատմության ընթացքում վայրի ցեղերը հաճախ են փորձել ջնջել Հայաստան երկիրս աշխարհի քարտեզից, վերացնել մոլորակի քաղաքակրթական օրրանը, սակայն փոշի են դարձել, ու հետքն անգամ չկա նրանց:

Հայոց աշխարհը քրիստոնյա առաջին երկիրն էր, որ աշխարհին ներկայացավ իր ուրույն դեմքով և իր ուղին հարթեց աշխարհի ազգերի ներկապնակի մեջ՝ դարերի մեջ պահպանելով իր բացառիկ ու տպավորիչ գույնը, որը դեռ աշխարհի ոչ մի նկարիչ չի կերտել իր կտավներում:

Հրոսակներ եկան տափաստաններից ու անապատներից, ջունգլիներից ու մացառուտներից, եկան յաթաղաններով ու սվիններով, եկան բելերը, թուրք-սելջուկները, մոնղոլ-թաթարները, արաբները, եկան սուլթան համիդներն ու թալեաթները, էնվերներն ու ջեմալները… Եկան ու փորձեցին մի ողջ ժողովուրդ արյան մեջ խեղդել ու ջնջել աշխարհից, սակայն Նահրյան երկիրս հարատևեց Հայկի ու Արայի, Տիգրանի ու Արտաշեսի, Սասնա ծռերի ու Գևորգի, Անդրանիկի ու Սերոբի, Աշոտի ու Ավոյի, Պետոյի ու Լեոնիդի, Տարոնի ու Թաթուլի (անթիվ են նրանք) համառ պայքարով՝ մնալով միշտ անբիծ ու անխառն, միշտ պարզ ու անապակ, միշտ հպարտ ու աննկուն:

Մենք աշխարհ եկանք աստվածատուր շնորհներով՝ ոչ թե ջնջելու ու հատելու, ջարդելու ու մորթելու, հոշելու ու կողոպտելու համար: Ոչ թե կեղծելու ու պղծելու համար:

Մենք ազատատենչ ու խաղաղասեր Հայկով աշխարհ եկանք, որ չհանդուրժի բռնակալության լուծը: Սասնա ծռերով եկանք, որ աշխարհում թագավորի արդարությունը:

Մենք Ոսկեդարով եկանք, որ աշխարհում գիրն ու իմաստությունը իշխեն: Սրի դեմ գրիչ հանեցինք ու «Աստվածաշունչ» թարգմանեցինք՝ թարգմանությունների թագուհի:

Աստվածապարգև սուրբ Մաշտոցով եկանք, որ աշխարհում հաստատվի մեր ազգի ու մեր հարևանների ինքնությունը: Այր մի, որ ապացուցեց.

Թե մի տեղ Վերջը դառնում է Սկիզբ…

… Որ այնտեղ է լոկ սխրանքն
սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի
հնար:

Քերթողահայր Խորենացիով եկանք, որ աշխարհին պարզենք մեր ազգի անձնագիրը, որն ուսանում է՝ հարգալից վերաբերվել այլ ազգերի, գնահատել սեփական արժեքները՝ զերծ մնալով ազգային սնապարծությունից: Նա եկավ, որ իր քերթված «Հայոց պատմություն»-ով տեղեկատու աղբյուր դառնա այլոց համար:

Եկանք աստվածընծա Գրիգոր Լուսավորիչով, որ քրիստոնեական լույսը սփռենք աշխարհով մեկ՝ անտեսելով անլուր տառապանքները:

Աշխարհի կողմից Տիեզերական վարդապետ հռչակված Նարեկացիով եկանք ու օրինակ ծառայեցինք աշխարհին, որ մարդն իր մեղքերը թոթափելու, Աստծո հետ երկխոսելու ու կատարյալ դառնալու հնարավորություն ունենա:

☞2

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԵՐՁ

...մենք լսել, նույնիսկ տեսել ենք, որ մեծ զորքերն էլ, իրենց կատարելագործված զենքերով, խուսափել են պատերազմի դաշտից, իրենց հարստությունն էլ թողել են թշնամուն: Միայն մի ուժ կա, որ չենք լսել, թե հեշտությամբ խորտակված լինի երբևիցե, մի ուժ կա, որ փոքրին էլ դարձնում է մեծ, տկարին դարձնում է հզոր և հաղթություններ ապահովում:

Դա ժողովրդի ոգևորությունն է:

Հովհ. Թումանյան «Սրանով կհաղթես», 1914

ԸՆԹԱՆԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՄԱԿԱՐԳՈՎ

Փետրվարի 25-ին Երևանում՝ «Թեքեյան կենտրոն»-ում տեղի ունեցավ Զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 161-ամյակին նվիրված ցերեկույթ, որը կազմակերպել էր «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ը: Ներկա էին մշակույթի, կրթության, տնտեսության, բանակի և այլ ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ: Ներկա էին նաև «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ի կողմից հայտարարված «Հայ ազգի առաքելությունը» և «Իմ բանակը» մրցույթներում հաղթող ճանաչված անձինք, և ուրախալի է՝ հիմնականում դպրոցականներ՝ մեր երկրի տարբեր վայրերից:

Ներկաներին ողջունեց հիմնադրամի տնօրեն Աննա Չիլինգարյանը: Ցերեկույթը Տերունական աղոթքով բացեց Մխիթար քահանա Հարոյանը: Մինչ մրցանակաբաշխությունը՝ հիմնադրամի խորհրդի նախագահ Նաիրի Հոխիկյանն ու տնօրեն Աննա Չիլինգարյանը ներկայացրին ազգային գաղափարախոսության 5 կարևոր բաղադրիչները՝ Ա. Ազգային ինքնություն՝ լեզու, մշակույթ, պատմություն, ավանդույթներ, ժառանգություն, Բ. Պետության տեսլական՝ կառավարման համակարգ, կրթություն, տնտեսություն, անվտանգություն, Գ. Հայրենիքի նկատմամբ պատասխանատվություն և ազգային արժեքներ, Դ. Ազգային շահի առաջնահերթություն, Ե. Նպատակ և առաքելություն:

Իսկ որո՞նք են ազգային գաղափարախոսական ծրագրի հիմնասյուները: Ըստ հիմնադրամի՝ մեր ժողովրդի կյանքում կարևոր դեր ունեցած անհատներն են՝ Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Հովհաննես Թումանյանը, Զորավար Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, Խրիմյան Հայրիկը, Ռաֆֆին, ինչպես նաև՝ «Սասնա ծռեր» մեր ազգային էպոսը: Ներկայացրին նաև գաղափարախոսական ծրագրի ուղենիշները:

Այնուհետև տեղի ունեցավ մրցանակաբաշխությունը: «Հայ ազգի առաքելությունը» մրցույթի հաղթող են ճանաչվել շուրջ 3 տասնյակ մասնակիցներ: Նրանց պատվոգրերը հանձնեցին ներկա մտավորականները, հասարակական գործիչները: Արցախցի լրագրող Սուրայա Ղազարյանը «Մովսես Խորենացի» անվանակարգում արժանացել է պատվոգրի: Իր ներկայացրած հոդվածում նշել է. «Մովսես Խորենացիով եկանք, որ աշխարհին պարզենք մեր ազգի պատմությունը...»: Մրցանակը հանձնեց Ն. Հոխիկյանը: Ուրախալի է, որ մրցանակի արժանացած աշակերտներից շատերը Տավուշի մարզի Պառավաքար սահմանապահ գյուղի բնակիչներ են: Մրցույթի հարցերում շատ էին նաև Արցախին նվիրվածները: «Ազատագրված Արցախ» անվանակարգում հաղթել է Մանե Մելքումյանը: «...եկեք տեր կանգնենք մեր իրավունքին՝ հանուն արդարության, հանուն վրեժի, հանուն Արցախ պապիկիս տված երդումի...»: Մանեն նաև հրաշալի արտասանեց Հովհ. Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը:

Դու էլ, դառած կռվածաղիկ, իմ բալիկն ես, այ՛ Ղարաբաղ,

Մեղրըդ օտար մեղվին տվող իմ ծաղիկն ես, այ Ղարաբաղ,

Հայաստանից քեզ պոկողը Հայաստանի եղբայրը չէ՛,

Երկուսիս մեջ դու էլ մոլոր իմ բալիկն ես, այ՛ Ղարաբաղ:

Մանեն իր պատվոգիրն ստացավ Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանի ձեռքից:

Ցերեկույթին ներկա էր նաև Արցախյան 44-օրյա պատերազմի անմահ հերոս, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Ալեն Մարգարյանի մայրը՝ Նազելի Տերտերյանը. «Իմ բանակը» մրցույթում հաղթող Միլենա Մամեդխանյանին հանձնեց որդու անվանակարգով՝ «Ալեն Մարգարյան» պատվոգիրը:

Մրցույթներում հաղթողներին պատվոգրեր հանձնեցին նաև Շուշիի քաղաքապետ Արծվիկ Սարգսյանը, Արցախի պետնախարար Նժդեհ Իսկանդարյանը, որը Հաթերք գյուղից է՝ Արցախյան առաջին գոյամարտի Անմահ հերոսի որդի: Ցերեկույթի ընթացքում «Հատուկ մրցանակ»-ի արժանացած Դիանա Շուշիից է. քեռին զոհվել է 44-օրյայի ժամանակ: Նարեի մայրը՝ Արփի Գասպարյանը, նույնպես ներկա էր Թեքեյան կենտրոնում: Իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Շատ հուզիչ էր ամեն բան, տպավորություն էր, որ քայլում էինք պատմության արահետներով ու նորովի բացահայտում հանդիպած դրվագները: Միջոցառմանը շատ կարևոր ու թանկ հյուրեր կային, ներկա էին նաև շատ տաղանդավոր երեխաներ, պատանիներ, երիտասարդներ ու մեծեր: Մեկը մեկից տաղանդավոր ու հայրենասեր: Էն մարդիկ, ովքեր ասում են՝ էս սերունդը սերունդ չի, եթե ներկա լինեին ու 5 րոպե լսեին այս սերնդին, կհասկանային, թե որքան ուժեղ ու գիտակից սերունդ ունենք ու հենց նրանց տեսնելով՝ կարող ենք մի փոքր հանգիստ շնչել՝ վստահ լինելով, որ պատմությունը փոխող սերունդ ունենք»: Ուրախությամբ է նշում նաև, որ դուստրը պատվոգիրն ստացավ ՀՀ վաստակավոր արտիստ, երգիչ Արսեն Գրիգորյանի՝ Մրոյի ձեռքից: Ուրախ է նաև, որ հանդիպեց Շուշիի քաղաքապետին, որի հետ դուստրը լուսանկարվեց, ու հիշեց՝ 5 տարեկան է եղել, որ Շուշիում հանդիպել են քաղաքապետին: Նարեն նվերներ ստացավ նաև «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ի գործընկեր «Բանիմացիա» և «Նախշ ձեռագործ» կառույցների կողմից:

Շատ էին մրցանակակիրները, ցերեկույթը տևեց մոտ 4 ժամ, սակայն հագեցած էր տարբեր ծրագրերով, որոնց ընթացքում ներկաները ծանոթացան պատմական նոր փաստերի, ազգային գաղափարախոսական արժեքների: Կարևորվեց շարունակել մեր մեծերի, այդ թվում օրվա հերոսի՝ Զորավար Անդրանիկի հայրենանվեր գործը:

Ցերեկույթին ներկա էր նաև Հայրիկ Ղազարյանի որդին՝ Սարո Ղազարյանը, որը տեղեկացրեց, որ հայրը «Անդրանիկ» երգը գրել է 1940-ական թվերին, երբ հույս կար, որ Խորհրդային Միությունը հետ կբերի Արևմտյան Հայաստանը, բայց...

Ցերեկույթի վերջում Նաիրի Հոխիկյանը շնորհակալություն հայտնեց իրենց աջակից բոլոր կազմակերպություններին, անհատներին: Տեղեկացրեց, որ իրենց կողմից հրատարակվել է Հայկազունիների հայոց թագավորական տոհմածառը, որի առաջին օրինակը նվիրեց «Թեքեյան կենտրոն»-ի տնօրեն Արմեն Ծուլիկյանին:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1 Եկանք Ներսես Շնորհալիով, որ շնորհն ու տաղանդը տիրական դառնան երկրագնդի վրա, որ հավատը ամուր բույն դնի մարդկանց հոգիներում:

Աշխարհի յոթ իմաստունների խրթին գաղտնագրերը վերծանող ու մրցույթում հաղթող Դավիթ Անհաղթով եկանք՝ աշխարհի զարմանքը շարժելով:

Մատենադարանի դարակները զարդարող գեղագիր, ձեռագիր մատյաններով եկանք, որ մարդկանց հաղորդակից դարձնենք գեղեցիկ արվեստի հզոր ուժին:

Համամարդկային արժեք ներկայացնող հայ ճարտարապետության բացառիկ կոթողներով ներկայացանք, որ արվեստն ավելի խոսուն դարձնենք (ինչ փույթ, թե այսօր վաչկատուններն անխնա ավերում են դրանք):

Աշխարհի հետ աստղերի լեզվով խոսող անմահ Համբարձումյանով եկանք, որ պեղենք Տիեզերքը:

Երկրի անհաս խորշերը հասնող որոտընդոստ հնչյունների փառահեղ արքաներով եկանք, որ աշխարհն ամեն օր հնչեցնի նրանց երաժշտության՝ ազգային հպարտություն պարգևող ելևէջները. Արամ Խաչատրյան, Առնո Բաբաջանյան:

Հայաստանի գույներով աշխարհը զարդարող Սարյանի կտավներով եկանք, որ ավելի գունեղ դարձնենք աշխարհի կյանքը:

Կոմիտասի հոգեպարար երգերով աշխարհ եկանք, որ «մաքրենք» մեր ազգային երգը ու մարդկանց հոգում միշտ վառ պահենք լույսը, բարին ու սերը:

Թումանյանի զարմանահրաշ հեքիաթներով ու խոհափիլիսոփայական քառյակներով ներկայացանք աշխարհին, որ ամենուր հաղթի բարին, ու տիեզերական Անհունի հետ շփվելու հնարավորություն ունենանք:

Եկանք անվանի զորավարներով, մարշալներով ու զորահրամանատարներով. Բալթիկայի արծվի թռիչքով եկանք, որ ֆաշիզմը իր որջում խեղդվի:

Թիկնեղ ու հաստաբազուկ մարզիկներով ներկայացանք աշխարհին, որ ի ցույց դնենք հայի գենետիկ ուժն ու կորովը:

Գիտնականների մի վիթխարի աստղաբույլով եկանք, որ բացահայտենք աշխարհի հրաշալիքները, առեղծվածներն ու մութ խորշերը:

Այսպես անսպառ է ու անհատնում Հայոց աշխարհի հոգևոր շտեմարանը, և հնարավոր չէ բոլորը թվել:

Մի խոսքով, համամարդկային արժեքներ ստեղծելու, միմիայն արարելու համար աշխարհ եկանք, որ չպակասեն բարին, լույսն ու հավատը, որ հավերժի արդարությունը, չմեռնի խիղճը:

Ահա սա է հայ ազգի առաքելությունը:

Սակայն պիտի խոստովանել, որ այս բոլոր առաքելություններով հանդերձ՝ մենք միայն չարամիտ հարևանների ու դարավոր ոսոխների խանդն ու նախանձն ենք շարժել, որ անընդհատ հետապնդել ու հալածել են մեզ, իսկ առաջադեմ աշխարհի գութը շարժել մեզ չհաջողվեց: Այս ամենի արդյունքում մենք անընդհատ «սեղմվեցինք» ու ադամանդացանք: Ի հեճուկս մահի՝ մենք միշտ փյունիկի պես հառնեցինք նորից:

Ինչքա՜ն իմաստուն էր Նաիրյան երկրի երգիչը.

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի,արջի ցեղերին,

Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին:

Անշուշտ, չար մշուշի պես կանցնեն բոլոր ոսոխները, բայց երբեք չի ավարտվի հայ ազգիս սուրբ առաքելությունը:

Պատահական չէ, որ այսպիսի գնահատականներ են տվել օտարները հայերի ու Հայաստանի մասին.

«Հայաստանը գիրք է, որով սովորել են առաջին մարդիկ... »:

Օսիպ Մանդելշտամ

«Հայ ժողովուրդը հին ժողովուրդներից մեկն է, որը մեծ ներդրում ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ»:

Մ.Դուդին

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

...Առանց գրքի ու առանց գիտության ազգը կարող է ապրել: Իսկ էնտեղ, որտեղ առանց գրքի ու առանց գիտության կարող են ապրել, էնտեղ գրողն ու գիտնականը չեն կարող ապրել, ավելորդ մարդիկ են, և ուզեն-չուզեն պետք է իրենց ճամփից շեղվեն, իրենց գործը թողնեն, ուրիշ գործով զբաղվեն, որ իրենք էլ ապրեն, իրենց տունն էլ պահեն: Կամ շա՜տ շա՜տ միաժամանակ երկուսն էլ անեն, ծառայեն և՛ աստծուն և՛ մամոնային: Բայց մենք արդեն լավ գիտենք, որ չի կարելի միաժամանակ և՛ աստծուն ծառայել և՛ մամոնային: Դրանից լավ բան չի դուրս գալ:

Հովհ. Թումանյան «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի», 1916:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150 - ԱՄՅԱԿԻՆ

Բազմած են շուրջս նրանք ամեն օր-
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի,
Երգում եմ, պատմում, ներդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի,
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ ջուր:

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանն այսպես է բնութագրել իր գրադարանը, որի հետ նա չափազանց խնամքով ու գորովանքով է վերաբերվել, ինչպես կվերաբերվեն երեխայի հետ: Նա ծնվեց ու ստեղծագործեց, որպեսզի հավերժ արժևորվի ու սիրվի գրականությունը, որ մարդն անընդհատ կարդալու ծարավ ունենա, ու ինչպես բանաստեղծը կասեր՝ արևի նման նայի աշխարհին:

Մշակութային միջոցառումները հատկապես թափ են առնում այս օրերին, երբ նշվում է երկու նշանավոր տոն՝ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը ու նրա անբաժանելի մասը համարվող Գիրք նվիրելու օրը:

Թերևս աշխարհում ոչ մեկը չի ունեցել այնպիսի հարուստ անձնական գրադարան, որպիսին ունեցել է Հովհ. Թումանյանը, ու ոչ ոք այնքան հոգատար չի եղել իր գրքերի հանդեպ, ինչպես Թումանյանը: Միջոցառումներ են տեղի ունենում ամենուր՝ դպրոցներում, գրադարաններում, մշակութային կենտրոններում, թանգարաններում: Մարդիկ շտապում են նախընտրել լավ գրքեր ու նվիրել դրանք իրենց հարազատներին, ընկերներին ու ծանոթներին՝ դրանով իսկ վերահաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ գիրքը մարդու անխարդախ բարեկամն է: Ու այս թոհուբոհի մեջ հասկանալու և ուրախանալու մի կարևոր բան կա. ինչ լավ է, որ մարդիկ գնահատում են գիրքը: Եվ այս ամենը՝ շնորհիվ Հովհ. Թումանյանի, որի գրքասիրությունը մրցակից ունենալ չի կարող:

Օրը մեկնարկեց «Գիրքը՝ հեքիաթասաց» հեքիաթի ժամով, որը վարեց Ալինա Ավետիսյանը:

Մեծ գրողի թանգարանի դռներն այդ օրը բաց էին բոլորի համար: Կենտրոնի բոլոր գիտաշխատողները զբաղված էին հյուրեր ընդունելու և ճանապարհելու կարևոր առաքելությամբ: Տարբեր դպրոցներից, քոլեջներից ու համալսարաններից կենտրոն էին ժամանել թումանյանասեր ու գրքասեր սովորողներ: Նրանք ծանոթանում էին բանաստեղծի անձնական գրադարանին, իրերին, ընտանիքի անդամների գործունեությանը, ճանաչողական խաղերով վերհիշում իրենց սիրած հեքիաթների հերոսներին ու գնահատում նրանց գործողությունները, ծիծաղում այդ հերոսների միամտությունների վրա, ուրախանում բարու հաղթանակով:

Հովհ. Թումանյանի ծննդյան և Գիրք նվիրելու օրվա առթիվ թանգարանի գիտական հետազոտող Թամարա Արամյանը ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում հանդես է եկել իր բանախոսությամբ՝ ներկայացնելով գրողի անձնական հարուստ գրադարանը, գրքերի հետ կապված հետաքրքիր հուշ-պատմությունները և գրադարանի թվայնացման ընթացքը: Նա թանգարանի կողմից գրքեր է նվիրել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի գրադարանին՝ դրանով իսկ արժևորելով ներառականությունն ու ինտեգրումը, որովհետև դա է մարդասիրացնելու հասարակությանը:

Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը 2008 թվականից, ՀՀ գրողների միության նախագահ, երջանկահիշատակ Լևոն Անանյանի նախաձեռնությամբ և ՀՀ կառա-

վարության որոշմամբ, Հայաստանում նշվում է որպես Գիրք նվիրելու օր՝ դառնալով ոչ միայն զուտ մշակութային միջոցառում, այլև որպես գաղափարական հանձնառության և ազգային ինքնագիտակցության խոր ընկալման ևս մեկ հնարավորության առիթ:

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը, շնորհավորելով դահլիճում ներկա հանդիսատեսներին կրկնակի տոնի առթիվ, որն առանձնահատուկ է ոչ միայն թանգարանի աշխատողների, այլև բոլոր հայերի համար, նշեց, որ բոլոր սերունդներն էլ անցնում են Թումանյանի հեքիաթներով, ապրում նրանց իրականության մեջ, շփվում հերոսների հետ, փորձում հասնել թումանյանական կատարելությանը, սակայն, ցավոք, ոչ ոք չի կարողանում մոտենալ այդ կատարելությանը: Շատ ցանկալի կլիներ, որ կատարելության այն սահմանները, որ գծել է Հովհ. Թումանյանը, մենք մոտենայինք դրանց ու ի կատար ածեինք մեր ազգային իղձերը: Թումանյանին ճանաչողները անցնում են նրա տարբեր աշխարհներով՝ հեքիաթների, բալլադների, պոեմների, քառյակների ու այլ աշխարհներով: Սակայն մի ուրիշ, առանձնահատուկ աշխարհ է բացվում մեր առաջ, երբ մտնում ենք նրա գրադարանը: Այդ գրադարանն ուսումնասիրելիս մեր առջև լրիվ ուրիշ Թումանյան է հայտնվում: Հայտնվում է գրականագետ, փիլիսոփա, լեզվաբան, արևելագետ, արվեստագետ Թումանյանը: Նրա գրադարանն ունեցել է մոտ 10 հազար կտոր գիրք, բայց մեզ է հասել 8147-ը: Առաջին գրքերը եղել են «Հյուսիսափայլ» ամսագրի համարները և Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որը ձեռք է բերել մեծ գումարներով: Առաջին գրադարանը նրա համար դարձել է ինստիտուտ, և այն փաստը, որ նա կիսատ է թողել իր ուսումը Ներսիսյան դպրոցում, բացատրել է հենց այդ հանգամանքով: Իր կրթության պակասը լրացրել է ինքնակրթությամբ: Իհարկե, շատ է երազել բարձրագույն կրթության մասին, սակայն մեծ ընտանիքի հոգսը հնարավորություն չի տվել իրականացնելու իր նվիրական երազանքը (սովորել Ժնևի համալսարանում): Բայց դա չի խանգարել, որ նա համարվի ժամանակի ամենալայնախոհ, ամենահիմաստուն, ամենահանճարեղ ու ազդեցիկ մարդը, որովհետև բացառիկ հեղինակություն էր վայելում ամենուր:

Տեղեկություններ կան, որ նրա հարուստ գրադարանը շատ մեծ դժվարություններով է ստեղծվել, և այն համարվել է գրողական գրադարաններից երրորդը՝ Լև Տոլստոյից և Գյոթեից հետո, սակայն նրանք իրենց գրքերի մեծ մասը ժառանգություն են ստացել և հետո համալրել, իսկ Թումանյանը դա ձեռք է բերել զուտ սեփական միջոցներով ու մեծ դժվարությամբ:

Տնօրենը, հուրախություն բոլորի, տեղեկացրեց, որ գրադարանի թվայնացման գործընթացը սկսված է ու շարունակվում է (ինքն անձամբ է դրան մասնակցում), շուտով հասանելի կլինի բոլորին: Այն ժամանակատար գործ է ու երկար ժամանակ է պահանջվելու՝ ամբողջը թվայնացնելու համար: Գրադարանը բաղկացած է բաժիններից՝ արևելագիտության, կովկասագիտության, բարբառների, բնագիտության, արվեստի պահարաններ և այլն: Այնտեղ կարող ենք գտնել նաև շատ հնատիպ գրքեր, որոնք շատ արժեքավոր են:

Իսկ թե ինչու է Թումանյանն այդքան սիրելի բոլոր տարիքի մարդկանց համար, բացատրվում է նրանով, որ գրողը շատ վաղ տարիքում է բացահայտել անհունության, հավերժության գաղափարը, այսինքն՝ այն ամենը, ինչ անանց է:

Այնուհետև թվայնացման գործընթացի մանրամասն տեղեկություններ հայտնեց մասնագետը, որը ներկայացրեց այդ աշխատանքի առաջին արդյունքները: Կայքէջի հեղինակը Թումանյան թանգարանի պաշտոնական կայքի հեղինակ «Նեմրութ» կազմակերպությունն է: Կայքէջի ստեղծման համար թանգարանը վճարել է 5 միլիոն 257 հազար դրամ: Մնացած աշխատանքների համար կպահանջվի ևս 2 միլիոն դրամ: Որոշում է կայացվել Թումանյանի գրադարանն ամբողջությամբ թվայնացնել: Թվայնացումը կատարվում է ըստ թումանյանական դասակարգման, և որևէ մեկն իրավունք չունի դրանք փոփոխության ենթարկել: Շատ կարևոր են մանավանդ այն գրքերը, որոնց լուսանցքներում նշումներ կան գրողի ձեռագրով, ու որոշ հատվածներ էլ ընդգծված են: Այդ գրառումներն ավելի շատ են Շեքսպիրի գրքերում: Համաշխարհային գրականության մասին Թումանյանի նշումները անգնահատելի մասունքներ են գրականագետ ուսումնասիրողների համար: Գուցե դրանք հաջորդ սերունդների համար առանձին ուսումնասիրության նյո՞ւթ են դառնալու: Թվայնացումը նպատակ է հետապնդում նախ՝ Թումանյանն ավելի հասանելի դարձնել բոլոր-բոլորին, և երկրորդ՝ պահպանել այդ գրքերը մաշվելուց ու ոչնչանալուց:

Կայքի միջոցով հնարավորություն է տրվելու նաև նվիրատվություններ կատարել՝ թվայնացման հսկայածավալ աշխատանքներն իրականացնելու համար:

Մասնագետը միաժամանակ ծանոթացրեց թվայնացման կայքէջի առանձնահատկություններին ու նրանից օգտվելու եղանակներին: Այն լայն հնարավորություններ է ստեղծում ընթերցասերների համար, որը շատերը կարողանան մեկ գրքից միաժամանակ օգտվել:

Թանգարանի գիտական հետազոտող Թամարա Արամյանը ներկայացրեց Թումանյանի անձնական գրադարանի կառուցվածքը:

«Կյանքը՝ գրքերեն. գիրքը և ընթերցանությունը» թեմայով հանդիսատեսների համար ելույթ ունեցավ երիտասարդ գրող Ռուբեն Եսայանը: Նա ընդգծեց, որ վերջին ժամանակներս փոխվել է գրքի ու ընթերցանության հանդեպ հասարակության վերաբերմունքը: Հիմա ավելի շատ են հետաքրքրված գրքերով: Խոսեց «Կյանքը՝ գրքերեն» պատմվածքի մասին, որը, իրար շարունակելով, գրել են տարբեր մարդիկ: Նա հայտնեց, որ իր «Թունելից 13 կմ հեռավորության վրա» գրքի սյուժեով ֆիլմ է նկարահանվում, և այն շուտով՝ մայիսի 7-ից կհայտնվի կինոէկրաններին:

Թումանյանի թանգարանի ցուցասրահում՝ հենց Թումանյանի անձնական սեղանի վրա, ցուցադրվեց 1852թ. հրատարակված Սայաթ-Նովայի «Երգեր» գիրքը, որը մեծ գրողը 1913թ. մարտի 8-ին սիրով ընծայել է իր մեծ բարեկամ Մամբրե Մատենճյանին: Քչերին է հայտնի, որ Գևորգ Ախվերդյանից հետո Սայաթ-Նովայի երգերի ուսումնասիրությամբ զբաղվող երկրորդ գրաքննադատը Հովհ. Թումանյանն է: Հենց նրա շնորհիվ է, որ Սայաթ-Նովան դարձավ բանաստեղծ,

թե չէ միշտ պիտի մնար որպես աշուղ: Ցուցադրությունն ավելի հետաքրքիր դարձավ ունկնդիրների համար, երբ հնչեց քամանչան, և դհոլի ուղեկցությամբ երաժշտական քոլեջի ուսանողները ներկայացրին Սայաթ-Նովայի երգերից մի քանիսը: Շատ տպավորիչ էր պահը, իսկ կատարումը՝ ներդաշնակ ու գեղեցիկ:

Թումանյանի թանգարանն առանձնանում է իր հոգևոր գունապնակով: Գունապնակ, որի երանգներն այնպես են միահյուսված, որ ստեղծում են մի հոյակերտ ճարտարապետական շինություն, որի դետալները խնամքով ու մեծ ճշգրտությամբ ագուցված են իրար՝ կազմելով մի կատարյալ ամբողջություն: Մշակութային կենտրոնի աշխատակիցներն իրենց գործի նվիրյալներ են, որոնց շնորհիվ ամեն մի միջոցառում վերածվում է շքեղ տոնակատարության:

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը, ամփոփելով օրվա անցուդարձը, նշեց, որ առաջիկայում մեծ ու պատասխանատու քայլեր են ձեռնարկելու: Նախատեսվում է Թումանյանի հեքիաթների արևմտահայերեն հրատարակություն Սփյուռքի գաղթօջախների համար, քանի որ այնտեղ շատ ողբալի ու տխուր վիճակ է տիրում:

Մարտ ամսին պլանավորված է «Հովհ. Թումանյան. ապրելու արվեստը» գրքի շնորհանդեսը, հետո՝ «Հազարան բլբուլը» թարգմանական գրականության ժողովածուի տպագրությունը:

Հաջողություններ մաղթենք Թումանյանի թանգարանի բոլոր աշխատակիցներին՝ իրենց անձնվեր ու ազգային գործունեության համար:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար…

Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Եվ Բաբելոնից, Ասորեստանից, Պարսկաստանից ու արաբական իշխանությունից հետո Արևելքը երբեք չէր ունեցել էսքան վայրենի, էսքան անկուլտուր ու անարժան մի ներկայացուցչություն: Մինչև թուրքական գերիշխանությունը՝ Արևելքը, որ կրոններ էր տվել աշխարհքին, շատ մեծ բանաստեղծներ ու գիտություններ՝ մեծ էլ հարգ ու հմայք ուներ և միշտ կենդանի ապրում էր ավանդական խոսքը, թե՝ Արևելքից է լույսը: Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացողություններ: Նա ոչ միայն ինքը չստեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չտվեց աշխարհքին, այլև դրսից չընդունեց ոչինչ և չմշակեց: Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող:

Հովհ. Թումանյան «Արևելքի նոր դարագլուխը», 1916

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ

Հայոց Արեւելից կողմը հանդիսացող Արցախի պատմության, մշակույթի վերաբերյալ վերջին տարիներին հրատարակված ուսումնասիրությունները Թումանյանի երազանքների իրականացումն են: Աշխարհին ի ցույց, թուրք պատմաբանների կեղծիքի հանդեպ պատնեշներ են Լեոյի ծանրակշիռ աշխատությունները Ղարաբաղի պատմության, մշակույթի, դպրոցական գործի եւ այլ բնագավառների վերաբերյալ, Ստ. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ակնարկը, Կ.Դավթյանի «Ղարաբաղի բարբառի քարտեզը», Բ.Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը 14-16-րդ դարերում», «Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան», «Գանձասար» ուսումնասիրությունները, Հ.Հակոբյանի «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ.», Մ.Ղազարյանի «Արցախի արվեստի գանձերը», Մոսկվայում հրատարակված «Ղարաբաղի հրեշտակը» (հեղինակ՝ Բ.Բարաթով) նկարագրդ ալբոմ-ժողովածուն եւ այլ գործեր: Այդ ամենը դեռ քիչ է: Պետք է հասնել Մեծ Լոռեցու խորհրդի ամբողջական իրականացմանը: Անհրաժեշտ է վեր հանել Արցախի նյութական եւ հոգեւոր գանձերի բոլոր հայաշունչ շերտերը՝ դրանով իսկ ջախջախիչ հարված հասցնելով ադրբեջանցի վայ-գիտնականների զավթողական արշավանքներին:

«Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին» հոդվածում Լեոն ներկայացնում է Մեծ Լոռեցու հետ իր հանդիպումների շարքը, գորովանքով ընդգծում իրենց երկարամյա բարեկամությունը: Լեոն գրում է, որ 1903թ. առաջին անգամ առիթ է ունեցել ճանապարհորդել Ալեքսանդրապոլի նորակառույց երկաթուղով եւ «Մշակ» թերթի մեջ խանդավառ սքանչացումով նկարագրել Լոռու ձորը: Լեոյի այդ փոքրիկ ակնարկը մեծ հաճույք է պատճառել Հ. Թումանյանին: Բանաստեղծը Լեոյի մեջ տեսնում էր իր պես մի լեռնցու, որին հաջողվել է հարազատ կերպով վերարտադրել Լոռու բնությունը: Այստեղից էլ ծնունդ է առել Մեծ բանաստեղծի երազանքը՝ տեսնել Ղարաբաղը: «Այն ժամանակներից,- նշում է Լեոն,- Թումանյանը ինձ շատ ու շատ անգամ է կրկնել, թե իր փափագն է՝ գեթ մի անգամ տեսնել Ղարաբաղը: Բայց այդ փափագը ուրիշ շատերի հետ նա տարավ գերեզման» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969, էջ 52):

Լեոյի՝ դեպի հայրենի Ղարաբաղն ունեցած կարոտը, Ղարաբաղը տեսնելու Թումանյանի բաղձանքը խաչաձեւել եւ դարձել էին երազանքի մի հոգեզմայլ թրթիռ: Եվ լեռնային ինչ տեղանքում լինում էին, անպայման Ղարաբաղն էին պատկերացնում, փափագում Ղարաբաղը:

Իր հիշողության մեջ Լեոն պատմում է լեռնային Մարց գյուղ կատարած իրենց շրջագայության մասին:

Պարզվել է, որ Մարց գյուղը շատ վաղուց Լոռի է տեղափոխվել Ղարաբաղից: Գյուղի մոտ, ծառախիտ անկյունում վեր է բարձրացված հսկայական մի խաչարձան: Այն մի տապանաքար է խաչարձանի ձեւով, որի մի երեսն ամբողջովին ծածկված է արձանագրությամբ: Այդ գրության մեջ նշված է արձանի կանգնեցման ժամանակը. «Ի դառն եւ նեղ ժամանակիս, հորում թաթարն տիրեր»: Դժվար չէ կռահել, որ գյուղը Արցախից այդ անառիկ վայրն է տեղափոխվել մոնղոլ-թաթարական տիրապետության շրջանում: Գյուղից վեր Արփաթալա կոչվող լեռնային բարձրության վրա, որտեղ գերում-հափշտակում են բնության ընտրյալ տեղի բազմաթիվ հմայքները, Հ. Թումանյանը ձգտում է իմանալ Լեոյի ստացած տպավորության մասին: Լեոն հուշերում բերում է իր պատասխանը. «Ես փառաբանում եմ նրա հայրենի բնությունը, իմ խորին զմայլանքն եմ հայտնում եւ ասում եմ, որ տեղը շատ նմանություն ունի Ղարաբաղի Թթու-ջրին եւ կարող է դառնալ առաջնակարգ կլիմայական կայարան» (Նույն տեղը, էջ 91): Նման պահերին ավելի է բորբոքվում Թումանյանի՝ Ղարաբաղ այցելելու երազանքը:

Հ. Թումանյանին գերել էր Լեոյի գիտելիքների պաշարը հայագիտության, կովկասագիտության բնագավառներում: Բանաստեղծի դուստրը՝ Ն. Թումանյանը, գրում է, որ երբ Լեոն գալիս էր հոր մոտ, խոսում էին պատմությունից: Կովկասագիտությունը եւ հայոց պատմությունը նրանց զրույցի նյութն էր, գուցե հենց այդ էր պատճառը, որ նրանք շուտ մտերմացան, բարեկամացան: «Զրույցի ժամանակ,- ընդգծում է նա,- հայրիկը կովկասագիտության պահարանից հանում էր կովկասյան պատերազմների հայտնի պատմագիր-գեներալ Պոտտոյի հատորները, Մաեւսկու «Ванский вилает» եւ ուրիշ գրքեր»: Կովկասագիտությունը հատուկ տեղ էր գրավում նրա հետաքրքրությունների մեջ, կարելի է ասել՝ կենտրոնական տեղ, քանի որ կապված էր ժողովրդի պատմության, նրա հարեւան ժողովուրդների հետ: «Վերք Հայաստանի»-ն ուսումնասիրելիս հաճախ էր դառնում կովկասագիտական գրքերին, Պոտտոյի հատորներին» (Հ.Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Եր., 1969, էջ 77): Հայտնի է, որ Պոտտոյի երկերում զգալի տեղ է գրավում Ղարաբաղի մելիքների, հարյուրապետների, հերոսական մարդկանց անմոռանալի գործերի նկարագրությունը:

Լեոյի հարգանքը Թումանյանի հանդեպ պարզ էր, անմիջական ու սրտացավ: Հետաքրքիր է հետեւյալ դեպքը: 1912թ. Թումանյանին կանչել էին Պետերբուրգ՝ դատավարության: Բացակայության ժամանակ որդիներից Արտիկը գրել էր «Վան-Դեյկ» պիեսը, իսկ Համլիկը՝ «Ի՞նչ է գեղարվեստը» հոդվածը: Նրանք բանավեճ էին սկսել Մուշեղ Աղայանի հետ գեղարվեստի շուրջ: Լեոն «Հորիզոն»-ում տպել էր նրանց ակնարկները: Երբ Թումանյանը վերադարձավ Թիֆլիս, մի օր Լեոյին ասաց. «Ա՛յ մարդ, ամբողջ աշխարհը կանգնել է ու չի կարողանում ապացուցել, թե ինչ է գեղարվեստը, ավելորդ ենք համարում խոսել: Ասենք՝ սրանք սարսաղ են, գրում են, դու ահագին մարդ, ի՞նչ ես սրանց խելքին ընկել, տպել»: Լեոն ասել էր ծիծաղով. «Դե ասի, հերները բանտարկված է, տպեմ, սիրտները չկոտրեմ»: Իսկ իր տղաներին Թումանյանը դիտողություն էր արել. «Նախքան էդ տեսակ հարցերի մասին գրելը պետք է կարդալ, շատ կարդալ գեղարվեստի մասին, ճաշակ զարգացնել, հետո գրել» (Նույն տեղը, էջ 107):

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին Թումանյանը կորցրել էր հանգիստն ու քունը: Լեոն պատմում է այն մասին, թե ինչպես բանաստեղծը գերմանական միսիայի պետ ֆոն Կռեսի մոտ Հայրենակցական միությունների անունից խնդրել է, որ գերմանական միսիան միջոցներ ձեռք առնի, որպեսզի տաճիկ փաշաները Լոռում, Ախալքալաքում ու Ղարաբաղում չնեղեն ժողովրդին:

Հ. Թումանյանի անկեղծ ու մեծ բարեկամներից էր նաեւ ականավոր բժիշկ, շուշեցի Գրիգոր Սաղյանը, որը բժշկական կրթություն էր ստացել Բեռլինի եւ Ենայի համալսարաններում, հետագայում իր նպաստը բերել հայ բժշկագիտության զարգացմանն ու հարստացմանը: Գ.Սաղյանը 20-րդ դարի սկզբից մինչեւ Մեծ Լոռեցու մահը հետեւել է բանաստեղծի առողջությանը, մասնակցել Թիֆլիսում նրա առաջին վիրահատությանը, 1923-ին ուղեկցել Մոսկվայի հիվանդանոց, բոլոր դժվարին ու վտանգավոր պահերին մնացել մոտը: Ն. Թումանյանն իր «Հուշեր եւ զրույցներ» գրքում հանգամանորեն պատմում է, որ Սաղյանը հաճախ էր այցելում պոետին, նույնիսկ Թիֆլիսից դուրս գտնվող առողջարաններում հանգստանալիս: Դա սոսկ բժշկի այցելություն չէր: Թումանյանի հետ Սաղյանի յուրաքանչյուր հանդիպում վերածվում էր զրույցների, երգերի, անեկդոտների հետաքրքիր երեկոների:

Բժիշկ Գ.Սաղյանի եւ Հ.Թումանյանի եղբայրական, անկաշկանդ բարեկամության մասին է վկայում նաեւ բանաստեղծ Վաղարշակ Նորենցը: Հանդիպումների ժամանակ նրանց զրույցի թեման Ղարաբաղն էր: Վ.Նորենցը գրում է. «Թումանյանի նման Սաղյանն էլ սիրում էր ժողովրդական զրույցներ եւ անեկդոտներ ու հիանալի պատմող էր: Մի քանի անգամ ներկա եմ եղել բանաստեղծի եւ բժշկի մրցմանը՝ անեկդոտներ պատմելիս: Բանաստեղծը անեկդոտներ պատմում էր լոռեցիների կյանքից՝ համեմված Լոռու բարբառի բնորոշ արտահայտություններով, իսկ բժիշկը՝ Ղարաբաղի կյանքից եւ Ղարաբաղի բարբառի համեմունքով: Երկուսն էլ վարպետ էին եւ արժանավոր մրցակիցներ: Անհնար էր զսպված ծիծաղով լսել այդ մանր եւ սրամիտ զրույցները» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969, էջ 865):

Հ. Թումանյանի համար Սաղյանը Արցախի ժողովրդական կենսափորձից ծնված բարության օրինակ էր: Պատահական չէ, որ մեծ բանաստեղծը Վ.Նորենցի վկայությամբ Սաղյանին է նվիրել իր հետեւյալ փիլիսոփայական քառյակը.

- Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բե՛ր:
Էս էլ կանցնի՝ հանց երազում, թասդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալէն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում, թասդ բե՛ր:

Հ. Թումանյանն իր ղարաբաղցի ընկերներից առնում էր դեպի մեր լեռնաշխարհը եղած կարոտը, մտովի տեսնում նրա գեղեցկությունները, զգում հայաշունչ Արցախի ժողովրդական իմաստությունն ու խոսքի հմայքը:

* * *

Հովհ. Թումանյանի սիրտը միշտ Ղարաբաղի լեռներում էր: Նրա հոգում ծփում էին արցախյան կուսական անտառները, խոխոջում զուլալ աղբյուրները, նրան հմայում էին ղարաբաղցու կամքի ուժը, իմաստությունը, վեհությունը, ազգային արժանապատվության խոր զգացումը: Նույնիսկ անձնական կյանքին սպառնացող ամենավտանգավոր պահերին Հ. Թումանյանին հուզում էին Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները, պաշտպանում էր Արցախի իրավունքներն ու շահերը:

1905-1907 թթ. հեղափոխությունից հետո, ինչպես գրում է Լեոն, ամպեր էին կուտակվում Ռուսաստանի ամբողջ հայ մտավորականության գլխին: Ցարական գարշելի բյուրոկրատիան ինքն էր սարքել հայ-թուրքական կոտորածները, այնուհետեւ հալածում էր հայերին՝ նրանց կազմակերպած ինքնապաշտպանության համար: Սպիտակ տեռորը տարածվել էր ամբողջ հայ ժողովրդի վրա՝ իբրեւ վրեժ այն խայտառակ պարտության, որ ցարական կառավարությունը կրել էր հայ ժողովրդից եկեղեցական կալվածքների հարցում: Գործը սկսում էր իբր թե միայն Դաշնակցական կուսակցության դեմ, բայց իրո՛ք պատուհասվում էր ամբողջ հայ մտավորականությունը: Ռուսաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում սկսվեցին խուզարկություններ, ձերբակալություններ: Եվ ահա այդ օրերին բանտարկվում է նաեւ Հ.Թումանյանը: Բանաստեղծին առաջին անգամ բանտարկեցին 1908թ. դեկտեմբերի 24-ին, որդու՝ արական երրորդ գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ Մուշեղի հետ եւ տարան Մետեխի բանտ:

Հ. Թումանյանին բանտարկել էին 1905-1906 թթ. գործունեության համար, երբ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ձիավորներով գնացել էր Ղազախ՝ թուրքերի հետ հաշտություն կնքելու եւ իր միսիան ավարտել էր հաջողությամբ: Բայց նախնական քննության ժամանակ մի շարք թուրքեր, ինչպես նաեւ այգեհատցի Շահբազ Շահվերդյանը շատ աննպաստ ցուցմունք էին տվել, իբր Թումանյանը շրջել է թուրք գյուղերով եւ առաջարկել միանալ հայերին՝ տապալելու ռուսական կառավարությունը: Գործը հանձնված էր քննիչ Լիժինին, որը հայատյաց մի սրիկա էր: 1909թ. հունիսին Մուշեղին բաց թողեցին, իսկ Թումանյանին ժամանակավորապես ազատեցին գրավականով:

1911թ. սեպտեմբերին լուր է տարածվում, թե Թումանյանի «գործը» քննվելու է Պետերբուրգում տարվա վերջին: Դա նոյեմբերի 1-ն էր: Դեկտեմբերի 9-ին բանաստեղծի դուստր Աշխենի ամուսինը՝ Գեւորգ Խատիսյանը, պաշտոնապես նշանակվում է մեղադրյալ

ՓԱՍՏԵՐ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ

Հ.Թումանյանի պաշտպան: Դեկտեմբերի 26-ին Թումանյանն Աշխենի հետ մեկնեց Պետերբուրգ: Այդ ժամանակ Մուշեղը (որդին) Պետերբուրգի համալսարանի բնագիտական բաժնի երկրորդ կուրսի ուսանող էր: Հունվարի սկզբին Թումանյանը եւ Աշխենը հասան Պետերբուրգ: Թումանյանին տարան Սենատի շենք, նախնական կալանքի տուն: Մեծ Լոռեցին արդարացվեց: 1912թ. Պետերբուրգից Ն.Թումանյանին գրած նամակում բանաստեղծը հայտնում է. «Լսեցիր, երեւի, թե իմ ցուցմունքն ինչ խեղաթյուրումներով է լցված: Էսօր Աշխենն ու Մուշեղն էին մոտս... Երկուսն էլ շատ լավ են... Այժմ Գիգայի տրամադրությունը շատ է լավացել: Գիգան այնպես լավ պաշտպանեց Ղարաբաղի, Համազասպի եւ հաշտարխանցիների գործը, որ բոլորը զարմացան-միանգամայն հրաշալի, ամենաառաջնակարգների նման: Բոլոր փաստաբանները շատ գովեցին» (Ն.Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Եր., 1969, էջ 388:)

* * *

Հ. Թումանյանի ստեղծագործության կաթնաղբյուրը ժողովրդական բանահյուսությունն էր: «Հայոց դրամբյանիզմն ու ես» հոդվածում պատասխանելով վայ-քննադատ Դրամբյանին, նշել է. «Ես իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ եւ աշխատում եմ ինչքան կարելի է, մոտիկ ու հարազատ մնալ, «Սասունցի Դավիթ»-ը կազմելիս էլ եմ էդպես արել, նույնիսկ Անուշն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից, եւ շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում՝ բառացի» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 198-199):

Ինչպես տեսնում ենք, Թումանյանը հայտնում է, որ «Անուշ» պոեմի նյութը եւս վերցրել է ժողովրդականից: Հետաքրքիր է, բանաստեղծը ի՞նչ աղբյուրներից է օգտվել իր անմահ պոեմը գրելիս: Պարզվում է, որ «Անուշ»-ը ունեցել է ղարաբաղյան ակունք:

1881թ. Ռաֆֆին շրջագայել է Արցախի գյուղերում: Կուսապատում իջեւանել է բժիշկ Աղասարյանի տանը: Վերջինս խնդրել է անվանի գրողին՝ գրի առնել իրենց տոհմի հետ կապված Անուշի, Սարոյի եւ Մոսիի ողբերգական պատմությունը, որը տեղի է ունեցել իրենց գյուղում: Ռաֆֆին կատարել է նրա ցանկությունը եւ ձեռագիրը նվիրել բժշկին: Տարիներ անց, 1930-ական թթ., մոխրաթաղցի բանահավաք Ասատուր Բաբայանը, ծանոթանալով այդ ձեռագրին, իր հետ բերել է Երեւան եւ ներկայացրել Ավ. Իսահակյանին: Վարպետը խորհուրդ է տվել պահպանել ձեռագիրը եւ հարմար պահին հանձնել տպագրության: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արգելված էին Ռաֆֆու, Չարենցի ստեղծագործությունները: Ա.Բաբայանը Ռաֆֆու ձեռագիրը Չարենցի գրքերի հետ միասին պահ է տալիս մեծշենցի իր զոքանչին, ապա մեկնում ռազմաճակատ: Վերադառնալով պատերազմից՝ Ա.Բաբայանն իմանում է, որ Սարգիս անունով իր բարեկամի խորհրդով Ռաֆֆու ձեռագիրն ու Չարենցի երկերը ոչնչացվել են: Հետպատերազմյան շրջանում Ավ.Իսահակյանը Երեւանում Ա.Բաբայանին հիշեցնում է Ռաֆֆու ձեռագրի մասին: Բայց ավա՜ղ, այդ թանկարժեք գանձն արդեն ոչնչացվել էր: Հարց է առաջանում. Անուշի, Սարոյի, Մոսիի ողբերգության պատմությունը ինչպե՞ս է հասել Թումանյանին: Կան տեղեկություններ, որ շատ կուսապատցիներ, դրանց թվում եւ Աղասարյանների տոհմի մի մասը, 19-րդ դարում տեղափոխվել են Լոռի, Շուլավերի կողմերը՝ իրենց հետ տանելով եւ այս պատմությունը, որն էլ աղբյուր է ծառայել Մեծ Լոռեցու անմահ պոեմի համար (Այս մասին տե՛ս Բ.Կարապետյանի «Հարիւր տարուայ երկխօսութիւն» գրքում, Եր., 1991): Անուշն իրականում իրեն կախել է: Ավանդությունը պատմում է, որ Անուշը թաղված է Կուսապատի հին գերեզմանոցում:

Հ. Թումանյանի՝ ղարաբաղցիների հանդեպ ունեցած ջերմ սիրո մասին է խոսում հետաքրքիր մի պատմություն, որ բացահայտվել է բոլորովին վերջերս: Դեպքը տեղի է ունեցել 1918թ.: Երեսուն երիտասարդ ղարաբաղցիներ, որոնց մեջ է եղել Մարտակերտի շրջանի Պողոսագոմեր գյուղի բնակիչ Գրիգոր Աբրահամյանը, ցարական բանակում ավարտելով ռազմական ծառայությունը, Թիֆլիսից վերադառնում էին հայրենիք: Ճանապարհին Գանձակում թուրքերը շրջապատում են նրանց եւ գերի վերցնում: Ութ տանջալի օրերից հետո, նրանց հաջողվում է քանդել ձիանոցի պատը եւ հետ փախչել Թիֆլիսի զորանոցը, որ մոտ էր Հ.Թումանյանի բնակարանին: Մեծ բանաստեղծը, լսելով ղարաբաղցիների ոդիսականի մասին, այցելում է զորանոց, զրուցում նրանց հետ: Մինչեւ այդ հանդիպումը բանաստեղծն իր ընկերներից մեկի տանը տեսել էր մի գեղեցիկ օրորոց եւ իմացել, որ այն պատրաստել է այդ ղարաբաղցի տղաներից մեկը՝ Գրիգոր Աբրահամյանը: Բանաստեղծը նրան հրավիրում է իր տուն: Ստեղծվում է մի ջերմ մթնոլորտ Թումանյանի ընտանիքի եւ Գրիգորի միջեւ: Բանաստեղծի կինը՝ Օլգան, հանձին Գրիգորի, տեսնում էր իրենց որդուն՝ Արտավազդին եւ ամեն անգամ սեղան նստելիս կրկնում էր. «Լրացել է իմ տասը երեխաների թիվը»:

Որպես երախտագիտության տուրք՝ Գրիգորը մի օրորոց է պատրաստում եւ նվիրում Թումանյանի նորածին թոռանը: Իսկ փոխարենը Թումանյանն ընծայում է լամպ-լուսամփոփ: Մեծ դժվարությամբ բանաստեղծի նվերը հասցվում է Պողոսագոմեր:

Յոթանասուն տարի անց վաստակաշատ ուսուցչուհի Մարգո Ահարոնյանը Աբրահամյանների օջախում Գ.Աբրահամյանի այրուց՝ Վարդանուշ մայրիկից լսում է այդ պատմությունը:

Ուսուցչուհին խորհուրդ է տալիս լամպը նվիրել Երեւանի Հ. Թումանյանի անվան թանգարանին, սակայն ընտանիքի անդամները հրաժարվում են՝ չցանկանալով բաժանվել այդ սուրբ մասունքից (Տե՛ս Մ.Ահարոնյան, «Թումանյանի լապտերը», «Խորհրդային Ղարաբաղ», 1990թ., մարտի 21):

Տեղի է ունենում անսպասելին: Ադրբեջանցի օմօնականները խորհրդային զինվորների օգնությամբ տեղահան են անում Մարտակերտի շրջանի գյուղերը:

Պողոսագոմերն ազատագրելուց հետո Աբրահամյանների առաջին հոգսը Թումանյանի լամպի որոնումն էր: Բայց ապարդյուն: Ադրբեջանցիներն ավար էին տարել նաեւ լամպը: Իմանալով այդ մասին՝ խորհեցի. գուցե ադրբեջանցի ասկյարները Թումանյանի լամպի լույսով մարդ դառնան եւ հրաժարվեն վայրենությունից. չէ՞ որ հենց նրանց մասին է ասված Մեծ Լոռեցու քառյակը.

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան:

* * *

«Երեկվա պատմությունը եւ այսօրվա իրականությունը», «Ահա՛ թե ինչու», «Փորձիչը», «Հայկական հարցն ու իր լուծումը» եւ այլ հոդվածներում Թումանյանը խոր իմացությամբ քննարկել է Հայկական հարցի պատմական արմատների, հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման, քաղաքական կողմնորոշման եւ այլ կարեւոր խնդիրներ: Այդ հարցերի արծարծման ընդհանուր խորապատկերի վրա Մեծ Լոռեցին մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Ղարաբաղին: Նա ներքին մի խանդաղատանքով է ընդգծում, թե ինչպես դեռեւս 17-րդ դարից Գանձասարի կաթողիկոսները սերտ համագործակցել են Ղարաբաղի մելիքությունների ազատագրական ոգորումներին: 19-րդ դարում Գանձասարը դարձել էր ազատագրական շարժումների կենտրոն: Դարասկզբին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի շուրջն էին համախմբվել շարժման ղեկավարները: Սկսած 1703-1704 թվականներից՝ Գանձասարից Ռուսաստան են հղվել դիմումներ ու նամակներ թուրք-պարսկական լծից ազատագրվելու խնդրանքով: «Շատ շուտով,- գրում է Թումանյանը,- փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը: Եվ թե՛ Օրին ու հայ հոգեւորականությունը, թե՛ հայ ժողովուրդը էն օրվանից երեսներն արին դեպի Ռուսաստան: Եվ ընդմիշտ դեպի Ռուսաստան: Մինչեւ էսօրվա օրը» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 163):

Հաստատված է, որ Թումանյան տոհմը սերվել է Մամիկոնյան սպարապետական տնից, որի մի մասը 10-րդ դարում Լոռի է տեղափոխվել Տարոնից: Բանաստեղծը դեռեւս պատանեկության տարիներին գրել է իրենց տոհմի պատմությունը «Գիրք հարանց» վերնագրով: Մեծ Լոռեցին այստեղ հիացմունքով է ներկայացնում Ուզունլար գյուղից մի ծերունու պատմածը ղարաբաղցի քաջերի մասին. «Երեւանու պատերազմի ժամանակ հայերից եւս զորք ժողովեցին: Այդ ժամանակ Ղարաբաղու Մելիք-Ջումշուդը գտնւում էր Դսեղ, որ ուներ իւր առանձին ժողովուրդը... Ջորահաւաքից յետոյ նորա զորքի գլխաւորներ ընտրեցին Մելիք-Ջումշուդին, Հովակիմ եուզբաշուն եւ ուրիշ մեծանուն ու քաջ անձանց Լոռու: Ես եւս մասնակցում էի այդ պատերազմին,- ասաց ծերունին» (Ա.Ինճիկյան, Հ.Թումանյան, Եր., 1969, էջ 32):

Ինչպես տեսնում ենք, 1826-1828 թթ. բազմաթիվ ղարաբաղցիներ մասնակցել են ռուս-պարսկական պատերազմին՝ ցուցաբերելով խիզախություն եւ քաջություն, որը եւ չէր կարող վրիպել Հ.Թումանյանի ուշադրությունից: Մեծ Լոռեցին կարեւորություն է տվել հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Եվ եթե նա կոչ էր անում ու ձգտում հաշտության ու խաղաղության՝ հայերի եւ թուրքերի միջեւ, դա չի նշանակում, որ նա մոռանում էր ինքնապաշտպանության խնդիրը:

1918թ., երբ ռուսները թողել էին Կովկասը, Թումանյանը շատ էր մտահոգվել հայ ժողովրդի վիճակով, երկրամասի ուժերի հարաբերությամբ: Նրան հուզել էին ռուսների՝ հայերին թողնված ռազմաճակատի գործերը, բերդերում եղած ռազմական եւ այլ պարենավորման հսկայական պահեստների եւ օգտագործման խնդիրները:

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լեւոն Եվանգուլյանին գրած նամակում (Տե՛ս Թումանյան, Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, Եր., 1969, էջ 435-437) բանաստեղծը բարձրացնում է Քուռ եւ Արաքս գետերի միջեւ գտնվող Հայկական Լեռնաշխարհի ապահովումը զենքով եւ զինամթերքով: Որպես Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազոր ներկայացուցիչ՝ նա նպաստել էր հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը, առանձնահատուկ հետեւել Ղարաբաղի ուժեղացմանը՝ այն համարելով էական խնդիր: Թումանյանն արդարացիորեն բարձրացնում էր Մեծ Հայաստանի ընդարձակ նահանգը հանդիսացող Արցախի պաշտպանության, հայ ժողովրդի հետ նրա համատեղ կյանքի ապահովման հարցերը: Այն տարիներին, երբ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանում ամեն գնով ձգտում էին Ղարաբաղը պոկել Հայաստանից, բանաստեղծը վրդովվել էր, 1919թ. նա Թիֆլիսում կազմակերպել էր ցույցեր ու ազգահավաքներ Ղարաբաղը Հայաստանից խլելու անարդարացի քաղաքականության դեմ:

«1919թ. հունիսի 22-ին Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու բակում Հովի. Թումանյանը կազմակերպում է համահայկական ցույց՝ միտինգ, ի պաշտպանություն կոտորածի ենթարկվող Ղարաբաղի հայության: Մասնակցում է ամբողջ հայ Թիֆլիսը: Հավաքվածներին Թումանյանը ներկայացնում է մի բանաձև, որն ընդունվում է միաձայն.

«Ի նկատի ունենալով, որ համաշխարհային պատերազմի ընթացքում, այն ժամանակ, երբ հայ ժողովրդին վիճակվեց մենմենակ պաշտպանել Երզնկայից մինչև Խրամ գետը ձգվող հսկայական ֆրոնտը, Ղարաբաղը իր 300000 հայությամբ, որ կազմում է ամբողջ ազգաբնակության մոտ 80 տոկոսը, հերոսական կռիվ մղեց տաճկական զորքի դեմ, որ Ղարաբաղի այդ հերոսամարտը անվիճելի է դարձնում նրա պատմական և օրգանական կապը մայր երկրի հետ, մի կապ, որ ամբողջ Ղարաբաղի հայությունը իր հինգ համագումարներում հայտարարել է իբրև ազգաբնակության ինքնորոշման սրբազան մի կամք, ի նկատի ունենալով, որ Ադրբեջանի ոտնձգությունները անվիճելի հայտարարելու Ղարաբաղը, բխում են նրա նվաճողական քաղաքականությունից, որ ներշնչում է Ադրբեջանին Հայաստանի և Անտանտի թշնամի Տաճկաստանը: Որ հայ անզեն գյուղացիների, կանանց և երեխաների մորթոտվելը տաճկական ագենտի և Ադրբեջանի կառավարության ստորությամբ տաճիկների հայաջինջ ոճրագործ քաղաքականության շարունակությունն է, որ հայության հետ պիտի միասին վրդովի և դաշնակից պետությունների խիղճը-միտինգն իր ցասումն ու զայրույթն հայտնում Ղարաբաղի անզեն կանանց ու երեխաների վերաբերմամբ տեղի ունեցած վանդալիզմի հեղինակներին: Իր ողջությունն է ուղարկում Ղարաբաղի հերոս հայությանը այն կռվի համար, որ նա վարում է հանուն մայր երկրի կյանքով ապրելու սրբազան իրավունքի: Միևնույն ժամանակ միտինգը վստահ Անտանտայի ժողովուրդների, կառավարությունների արդարամտության բարեկամական զգացմունքներին, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել իր աննախընթաց մարտիրոսությամբ, իբրև նրանց փոքր, բայց հավատարիմ դաշնակից, վստահ այդ զգացմունքներին , միտինգը դիմում է նրանց և խնդրում անմիջապես ձեռք առնել ամենակտրուկ զինական միջոցներ անկրկնելի դարձնելու ապագայում Ղարաբաղի գյուղացիության կոտորածը տաճկա-ադրբեջանական ագենտների կողմից, որ կարող է վերածվել երկու հարևան ժողովուրդների փոխադարձ կոտորածի: Անմիջապես ձերբակալել և դատի հանձնել տեղի ունեցած կոտորածի հեղինակներին, անպայման հեռացնել ամբողջ Հայկական Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը, որին չի ճանաչում և երբեք չպիտի ճանաչի Հայկական Ղարաբաղը: Թույլ տալ Հայկական Ղարաբաղին, համաձայն ազգաբնակության անդրդվելի կամքի, կցվելու Հայաստանին և եթե այդ կցումը որևէ պատճառով անհնար գտնվի առայժմ, Հայկական Ղարաբաղում կազմակերպել դաշնակից պետությունների վարչություն մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական վճիռը» (Նարինե Թուխիկյան, «Մի ցույցի պատմություն»):

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Ազգերը կարող են տանել նույնիսկ զարհուրելի կոտորածներ, բայց զարհուրելի ստորացում՝ ընդունել կամ ներել չեն կարող:

Հովհ. Թումանյան «Վերջնական անկում», 1911թ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ՂԱՐԱԴԱՂ» ՀԱՏՈՐԸ

«Մեր նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայկական ճարտարապետությունը գոնե թղթի վրա պահել»:

Ճարտարապետության դոկտոր, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի հիմնադիր՝ Արմեն Հախնազարյան

2020թ. փետրվարի 27-ին մահկանացուն կնքեց մեր ժամանակների մեծ հուշարձանագետ, Հայկական լեռնաշխարհում և աշխարհի այլ վայրերում գոյություն ունեցող հայկական պատմական հուշարձանների մասին տեղեկացնող, Սամվել Կարապետյանը: Նրա թողած ժառանգությունը մեծ գանձ է մեր ժողովրդի համար: Փետրվարի 26-ին Երևանում՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈՒՀ) նստավայրի Արմեն Հախնազարյանի անվան դահլիճում, տեղի ունեցավ «Հայաստանի պատմություն» գրքաշարի 6-րդ՝ «Ղարադաղ» հատորի շնորհանդեսը: Ներկա էին ՀՃՈՒՀ բարեկամներ, գիտնականներ, հայկական ճարտարապետությամբ հետաքրքրվողներ, արցախցի հուշարձանագետներ՝ Արցախի մշակույթի նախկին նախարար Լեռնիկ Հովհաննիսյանի հետ, «Հայաստանի պատմություն» գրքաշարի բաժանորդներ, հյուրեր: Ներկաներին ողջունեց ՀՃՈՒՀ վարչական հարցերի և հրատարակությունների գծով համատնօրեն, գրքի գիտական խմբագիր Ռաֆֆի Քորթոշյանը: Ներկայացրեց հիմնադրամի պատմությունը: Մեր պատմական հայրենիքի շուրջ 400.000 քառակուսի կիլոմետր մակերես զբաղեցնող պատմական Մեծ և Փոքր Հայքերի մեծագույն հատվածը դարերի ընթացքում տեղի ունեցած ցավալի իրադարձությունների պատճառով այժմ դուրս է Հայաստանի Հանրապետության սահմաններից: Եվ այս պատճառով հայկական պատմական հուշարձանների զգալի մասը, հատկապես Թուրքիային, Ադրբեջանին և Վրաստանին բռնակցված տարածքներում, ենթարկվում է միտումնավոր ոչնչացման, վերագրվում է այլ ազգերի, ցեղերի: Մեր պապերի ստեղծած պատմաճարտարապետական ժառանգությունը թեկուզ թղթի վրա փրկելու մղումով 1969-1970 թթ. ճարտարապետ Արմեն Հախնազարյանը (1941թ. Թեհրան-2009թ. Գերմանիա) նախաձեռնում է ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանի հուշարձանների ուսումնասիրման և վկայագրման աշխատանքը: 1982թ. Գերմանիայի Ախեն քաղաքում հիմնում է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) հասարակական կազմակերպություն գրանցվել է 1998թ., իսկ 2010-ից՝ հիմնադրամ է: Մինչև 2020 թվականը Սամվել Կարապետյանը եղել է ՀՃՈՒ հիմնադրամի երևանյան մասնաճյուղի տնօրենը: «Հայաստանի պատմություն» գրքաշարի հեղինակը նույնպես Սամվել Կարապետյանն է, որը նախատեսել է 9-10 տարիների ընթացքում տպագրել գրքաշարի 36 հատոր՝ հայոց այբուբենի տառերի քանակով և ներկայացնել Հայկական լեռնաշխարհի 36 գավառների պատմությունն ու մշակույթը, պատմական հուշարձանները: 2022 թ. հունվարի դրությամբ լույս է տեսել գրքաշարի առաջին 5 հատորը՝ Ա. «Հայոց ծոր»-2015թ., Բ. «Սալմաստ»-2017թ., Գ. «Արծկե»-2018թ., Դ. «Մռավականք»-2019թ., Ե. «Խնուս»-2022թ.: Նախաձեռնելով գրքաշարը՝ Ս. Կարապետյանն ասել է. «Գրքաշարի նպատակն է Հայաստանի պատմությունը ներկայացնել գավառ առ գավառ, յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ: Գրքաշարը խորհրդանշականորեն սկսում է Հայոց ծոր գավառից (հատոր Ա), քանի որ մեր ազգի անվանադիր Հայկ Նահապետը հաղթական ճակատամարտից հետո հենց այստեղ է հիմնում Հայք դաստակերտը»:

Եվ արդեն լույս է ընծայվել 6-րդ՝ «Ղարադաղ» հատորը: Համահեղինակ Էմմա Աբրահամյանը՝ Ս. Կարապետյանի կինը, նաև ՀՃՈՒՀ տնօրենների խորհրդի նախագահն է: Ներկայացրեց՝ ինչպես է կայացել գրքի 6-րդ հատորը: Նաև տեղեկացրեց՝ փետրվարի 27-ը ամուսնու հիշատակի օրն է: «Ղարադաղ» հատորը ներկայացնում է Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Ղարադաղ գավառի գյուղերի պատմությունը և պատմաճարտարապետական հուշարձանները: Այս հատորի վրա շատ է աշխատել, իրեն օգնել են հիմնադրամի աշխատակիցները՝ իրենց թիմը: Հատորը հրատարակվել է արմատներով Ղարադաղի Ղասումաշեն գյուղից Ժանեթ Միրզայանի մեկենասությամբ՝ ի հիշատակ թանկագին ծնողների՝ Հովհաննես Մելիք-Ղասումյանի և Հայկանուշ Ապարյանի: Նախահրատարակչական աշխատանքները կատարվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության, «Հ. Հովնանյան» ընտանեկան հիմնադրամի և ՀՃՈՒ-ԱՄՆ-ի աջակցությամբ: Է. Աբրահամյանը նշեց նաև. «Ղարադաղյան մեր հիմնադրամի արշավախմբի կատարած երկու գիտարշավներն իրականություն չէին դառնա, եթե մեզ չաջակցեր Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրեն Շերլի Ավետյանը»: Ասաց նաև՝ այժմ աշխատում են հաջորդ հատորների վրա:

Ցուցադրվեց նաև ֆիլմ, որում Ս. Կարապետյանը պատմում է՝ ինչպես են կարողացել ուսումնասիրել Իրանի տարածքում գտնվող Ղարադաղը: Չնայած բազում դժվարություններին՝ Սամվելն ու իր թիմը, ինչպես այլ տարածքներում, այստեղ ևս կարողացել են աշխատել, գտնել, ուսումնասիրել ու չափագրել, լուսանկարել հայկական հուշարձանները: Գրեթե 500 էջ ունեցող մեծածավալ գրքում առկա են բազում լուսանկարներ, փաստեր հայկական Ղարադաղի մասին: Ընդհանրապես նախատեսված է գրքաշարի յուրաքանչյուր հատորում ներառել մոտ 1000 լուսանկար: Է. Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց նաև նրանց, ովքեր իրենց տրամադրել են փաստաթղթեր, լուսանկարներ, այլ նյութեր, որոնք օգտագործվել են գրքում: Անդրադարձ եղավ Ղարադաղի տարածքում հայկական դպրոցների, եկեղեցիների, իշխանական տների, նշանավոր մարդկանց, կենցաղի, առողջության, արտագաղթի և այլնի մասին:

Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատական նահանգի կազմում Արասբարան կոչվող, Ահար շրջկենտրոնով վարչական տարածքը համընկնում է պատմական Ղարադաղի կամ Սևասարի գավառին, որն Արաքս գետի աջակողմում է: Համապատասխանում է Պատմական Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Քաղա գավառին: Սահմանակից էր Մեծ Հայքի Սյունիք, Արցախ և Վասպուրական նահանգներին: 17-րդ դարում Ղարադաղի 44 գյուղեր հարկատու են եղել Տաթևի վանքին: Այսինքն՝ Ղարադաղ-Սևասար գավառը եղել է Սյունիքի կազմում: Հայաշատ ու հայոց ոստան այս տարածքում հայաթափումն սկսվել է 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Առավել է հայաթափվել արդեն 1946 թվականին, երբ սկսվեց հայրենադարձությունը: Իսկ 1970-ականներին ամբողջական է հայաթափվել: ՀՃՈՒ հիմնադրամի կողմից գավառի հայկական հուշարձաններն ուսումնասիրվել են 1970-ական, 2011 և 2018 թվականներին:



Վերջում ներկաները հարցեր ուղղեցին բանախոսներին, բաժանորդներն ստացան իրենց գրքերը, ներկաներին նվիրվեցին Նոր Ջուղայի եկեղեցիներին և Ղարադաղ գավառը ներկայացնող պաստառ: Եղավ նաև հյուրասիրություն:

Ընթացքում զրուցեցի ներկաների հետ: Նորիկ Մկրտչյանը եկել էր Վայոց ձորի Մալիշկա գյուղից: Ասաց՝ հատուկ եկել է շնորհանդեսին մասնակցելու. անհամբեր սպասում է, թե երբ լույս կտեսնի գրքաշարի հաջորդ համարը: Իսկ Ս. Կարապետյանի գործը մեծ նվիրում է մեր ժողովրդին:

Ինչ խոսք, այսօր շատերն են գնահատում Ս. Կարապետյանի նվիրումը, ափսոսում վաղաժամ մահվան համար: Պատմաբան, գրող-հրապարակախոս, Ս. Կարապետյանի ընկեր Վահե Լորենցն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Ափսոս, որ չկաս: Քո պես մտավորականի կարիքը շատ կա: Դու չկաս, բայց գործդ կա և գործիդ շարունակողները կան: Քո ստեղծած գիտական կոթողներն անքննելի մեծ արժեքներ են, և միշտ ուղեկիցը կլինեն հայ ուսումնասիրողի...»:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ, պ. գ. դ. Արսեն Հարությունյանը, որը նույնպես ներկա էր շնորհանդեսին, տեղեկացնում է. «Հետաքրքիրն այն է, որ Ղարադաղի մի շարք գյուղեր, ինչպես օրինակ՝ Վինա, եղել է Տաթևի վանքապատկան գյուղերի կազմում (ըստ 17-րդ դարի ցուցակի՝ 3300 միավոր հարկ է վճարել վանքին), իսկ որ ուշագրավն է, ծագումով Ղարադաղի Մինջվան գավառակի Վինա գյուղից Եմիրզան իր հիշատակագրությունն է թողել Տաթևի վանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան պատին՝ խաչաքանդակի վերնամասում. «Եմիրզէս՝ ի երկրէն Ղարադաղու, ի գեղջէն / Վինանէ, ծ(ա)ռա(յ) ս(ուր)բ տ(ա)ջ(ա)րիս» (Յարութիւնեան 2016, 139. Կարապետյան, Աբրահամյան 2025, 341):

Կրկին շնորհավորում եմ լուսահոգի Սամվել Կարապետյանի ժրաջան թիմին, որն իր ուսուցչի գործն արժանի կերպով շարունակում է»:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ՀԵՆԱԿԵՏ

Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. Ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատով:
Հովհ. Թումանյան «Ողջունում ենք», 1916

«ՎԱՐԱՐԱԿՆ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԵՐԳԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Արդեն տեղեկացրել ենք, որ Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպությունը, կարևորելով Արցախի մշակութային կառույցների դերը բռնի տեղահանված մեր հայրենակիցների համախմբման, հազարամյա պատմություն ունեցող մշակույթի պահպանման գործում, աջակցել է դրանցից որոշներին վերակազմավորվել: Դրանցից է նաև Արցախի «Վարարակն» պետական երգչախումբը, որի առաջին «Հով արեք, սարեր ջան» խորագիրը կրող համերգը Երևանում՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, կայացավ 2026թ. փետրվարի 5-ին: Ներկա էին արցախցիներ, հյուրեր նաև Ռուսաստանից ու այլ երկրներից, երաժշտասերներ: Հաղորդավարները, ներկայացնելով ծրագիրը, տեղեկացրին՝ Արցախի պետական երգչախումբը տարիներ շարունակ Արցախի մշակութային կյանքում ունեցել է առանձնահատուկ տեղ՝ հայրենիքում ու արտերկրում ներկայացնելով հայ երգարվեստի լավագույն նմուշներ: Մասնակցել է համերգների, փառատոների՝ արժանանալով մրցանակների, ամենակարևորը՝ հանդիսատեսի ծափողջույններին ու համակրանքին: Սակայն եղավ ողբերգությունը, և հայրենի Արցախից հեռացավ նաև երգչախմբի անձնակազմը: Ինչպես արցախյան մնացած մշակութային կառույցները, այնպես էլ երգչախումբը կանգնեց մեծ փորձությունների առաջ: Եվ այսօր, երկար ընդմիջումից հետո, Մոսկվայում գործող «Դիալոգ» կառույցի օժանդակությամբ, երգչախումբը՝ «Վարարակն» անունով, գեղարվեստական ղեկավար Արմինե Յախշյանի գլխավորությամբ, երևանյան բեմում է: Մինչ երգչախմբի ելույթը, ներկաներին ողջունեցին գեղարվեստական ղեկավար Ա. Յախշիյանը և «Դիալոգ»-ի նախագահ Յուրի Նավոյանը: Ա. Յախշիյանն իր խոսքում ասաց. «Այսուհետև պետք է կրկին երգենք, ստեղծագործենք, արարենք: Այսօր երգչախումբը բեմում է՝ շնորհիվ վստահության ու հավատի: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Դիալոգ» հասարակական կազմակերպության ղեկավար պարոն Նավոյանին՝ մեզ վստահելու, հավատալու և մեր կողքին կանգնելու համար: Նրա օժանդակությունը մեզ համար նոր ուժ է, նոր ստեղծագործական եռանդ է»:

Համատեղ աշխատելու համար երգչախմբի գեղարվեստական ղեկավարին ու անձնակազմին շնորհակալություն հայտնեց նաև «Դիալոգ»-ի նախագահ Յու. Նավոյանը՝ հավելելով. «Այսօր հուզիչ պահ է... Ուրախ եմ ձեզ ողջունելու «Դիալոգ» հասարակական կազմակերպության մոսկովյան և երևանյան մեր թիմի անունից այս նշանավոր երեկոյին, երբ բեմում հանդես է գալիս Արցախի «Վարարակն» վերակազմավորված երգչախումբը: 1990 թվականին է ստեղծվել երգչախումբը, 8 տարի անց ստացել պետական կարգավիճակ: Այն նաև Արցախի վերածննդի վկան է: Շարունակելով Արցախի հետ մեր երկխոսությունը՝ բնականաբար չէինք կարող անտարբեր մնալ այդ փառահեղ երգչախմբի նկատմամբ: Կարծում ենք վերջին ողբերգության հետևանքները հնարավոր է հաղթահարել՝ հենվելով մշակույթի և հոգևոր արժեքների վրա: «Վարարակն»-ի վերածնունդը մի յուրօրինակ հոգևոր կարևոր հենակետ կարող է դառնալ մեր հայրենակիցների համար: Եվ միանգամայն բնական է, որ վերածնված «Վարարակն»-ը Երևանում իր գործունեությունն սկսում է Կոմիտասի ստեղծագործությունները ներկայացնելով»: Տեղեկացրեց նաև՝ վստահ է՝ մեծ ճանապարհի սկզբին են. ընդամենը 2 ամիս առաջ են սկսել համատեղ գործունեությունը, և ահա՝ առաջին հաշվետվությունը: Ասաց նաև՝ հավատում է, որ ամիսը մեկ երգչախումբը հանդես կգա համերգներով:

Այնուհետև դիրիժոր Ժաննա Աղաջանյանի ղեկավարությամբ, դաշնակահար Նադեժդա Ակոպյանի նվագակցությամբ ելույթ ունեցավ երգչախումբը: Հնչեցին Կոմիտասի ստեղծագործությունները: Պատահական չէ գեղարվեստական ղեկավարի խոսքը համերգի մասին. «Համերգը հանդիսատեսին տանում է Կոմիտաս Վարդապետի հոգևոր և ժողովրդական երաժշտության խորքերը՝ բացահայտելով նրա ստեղծագործական ուղու ամենանուրբ ու ապրեցնող էջերը: «Հով արեք, սարեր ջան» խորագիրը խորհրդանշում է հայրենի բնության, մարդկային զգացմունքների և ազգային հոգու միասնությունը, որն ամբողջությամբ արտացոլված է Կոմիտասի երգերում»:

Յուրաքանչյուր ելույթից հետո հանդիսատեսը ծափերով էր ողջունում արցախցի երգիչներին: Երգչախմբի հետ ելույթ ունեցավ նաև դուդուկահարների քառյակը՝ Միհեր Ամիրջանյան, Գագիկ Ադամյան, Հրաչիկ Արզումանյան և Սեդրակ Ավագյան՝ կատարելով «Լորիկ» և այլ ստեղծագործություններ: Համերգն ավարտվեց «Մոկաց Միրզա» երգով, որը կատարեց երիտասարդ երգիչ Սևակ Ջանյանը, իսկ հանդիսատեսը ոտքի վրա ընդունեց հրաշալի կատարումը:

Արցախի պետական երգչախմբի կազմավորվելու առաջին օրվանից՝ 33 տարի, մինչ Արցախի հայաթափումը, գեղարվեստական ղեկավար ու դիրիժորն է եղել Նինա Գրիգորյանը: Նրա ձեռնարկի հիմքում դրվել էր հայ դասական խմբերգային երաժշտության, արևմտաեվրոպական դասականների և ժամանակակից կոմպոզիտորների երգչախմբային ստեղծագործությունների մասսայականացումը՝ կենտրոնում ունենալով կոմիտասյան երաժշտարվեստի գոհարները: Տարիների ընթացքում երգչախումբը հանդես է եկել Ֆրանսիայում, Իսպանիայում, Ավստրիայում և այլ երկրներում: 2011-ին երգչախումբն Ստեփանակերտում առաջին անգամ բեմադրել է Ա. Տիգրանյանի Անուշ», իսկ 2013-ին՝ Տիգրանակերտում Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերաները:

Համերգի ավարտից հետո շատերն էին մոտենում «Դիալոգ»-ի նախագահին, հայտնում շնորհակալություն: ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղարախանյանն իր ֆեյսբուքյան էջում համերգի մասին գրել է. «Վերագտնում... Բարձր երգարվեստ, հույզերի շփոթ և լռություն...»:

Ջ. ԸՌՔՈՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

2023թ. սեպտեմբերի վերջին Հայոց Արցախը բռնի հայաթափվեց, ու մեր հայրենակիցները հարկադրաբար այսօր բնակվում են ՀՀ տարբեր մարզերում: Ինչպես քաջատեղյակ եք, հատկապես բազմազավակ ընտանիքներն ունեն նյութական աջակցության խիստ կարիք: Այս հարցում կարևոր դեր ունի «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Այս կառույցի մասին բազմիցս ենք անդրադարձել՝ սկսած 1996 թվականից, երբ բնակություն հաստատեցի Քաշաթաղի Բերձոր շրջկենտրոնում և աշխատում էի կրթության համակարգում: Այդ ժամանակ արդեն գործում էր հիմնադրամը և նյութապես

աջակցում էր շրջանի բազմազավակ ընտանիքներին:

2020թ. 44-օրյա պատերազմից հետո էլ հիմնադրամի նախագահ Արծրուն Ավագյանը, հոգաբարձության խորհրդի անդամները գործադիր տնօրենի հետ այցելում էին Արցախ, հիմնադրամի կողմից աջակցություն ցուցաբերում Բերձորում, Աղավնոյում, Լիսագորում և Բերդաձորում (Եղցահողում, Մեծ շենում, Հին շենում) բնակվող բազմազավակ ընտանիքներին, դպրոցների ուսուցիչներին, ինչպես նաև՝ Արցախի այլ շրջաններում, Ստեփանակերտում բնակվող կարիքավոր ընտանիքներին: Սակայն տեղի ունեցավ աննախադեպ ողբերգությունը, և այժմ ավելի քան 100 բազմազավակ արցախցիներ հիմնադրամից աջակցություն են ստանում Հայաստանում: Աջակցությունն իրականացվում է յուրաքանչյուր ամիս: Բազմազավակ ընտանիքներին հատկացվում է սնունդ, հագուստեղեն, այլ անհրաժեշտ պարագաներ:

Հիմնադրամն աջակցում է նաև արցախահայ ուսանողներին՝ ուսման վարձավճարի մասնակի վճարմամբ:

2024 թվականից հիմնադրամի հետ համագործակցում է կանադական «Գլոբալ Մեդիկ» կազմակերպությունը՝ հատկացնելով սնունդ հիմնադրամի շահառուներին: 2026թ. փետրվարի 4-ին Հիմնադրամի գործադիր տնօրենը, հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանը, Թոնի Կահվեն, Աշոտ Պողոսյանը, «Գլոբալ Մեդիկ»-ի կամավորներ Մորգան Քլարկը, Սոֆիա Հասանը և Մադալենա Մոնտեյրոն այցելեցին Արարատի մարզի Նոր Խարբերդ, Արմավիրի մարզի

Շահումյան և Արագածոտնի մարզի Օշական բնակավայրեր:

Նոր Խարբերդում է բնակվում 3 երեխաների մայր Նուբար Դանիելյանը, որի ամուսինը և երկու եղբայրները հերոսաբար զոհվել են Արցախյան գոյամարտում՝ 2023թ. սեպտեմբերի 23-ին հայրենի Մաճկալաշենի պաշտպանության ժամանակ:

Քաշաթաղի շրջանից է բռնի տեղահանվել ու 5 երեխաների հետ Նոր Խարբերդում բնակություն հաստատել Լիլիթ Բաղդասարյանը: Շահումյան գյուղում է հաստատվել 12 երեխաների մայր, բերձորցի Քրիստինե Ամյանը: Իսկ բերձորցի Տոնոյաններն այժմ բնակվում են Օշականում:

Բոլոր ընտանիքներին հատկացվեց սնունդ ու հագուստ՝ համապատասխան քանակով: Նշենք՝ Գ. Մելիքյանը կարևորում է նաև հայ արտադրողի շահերը և բազմազավակներին հատկացված սնունդը գնում է տեղական համապատասխան գործարաններից:

Օրվա ընթացքում Գ. Մելիքյանի ուղեկցությամբ հյուրերն այցելեցին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, ծաղիկներ խոնարհեցին Մաշտոցի շիրմաքարին, տեղեկացան 405-ից ի վեր հարատևող հայոց գրերի մասին:

Արցախից բռնի տեղահանված ու ՀՀ տարբեր մարզերում, Երևանում բնակություն հաստատած ավելի քան 85 ընտանիքների 2026թ. փետրվարի 7-ին և 8-ին հոգաբարձության խորհրդի անդամները հանձնեցին նրանց հասանելիք օգնությունը:

Մեր հովանավորները քաջատեղյակ են Հիմնադրամի հայապահպան ծավալուն գործունեությանը և ըստ կարելվույն աջակցում են մեզ՝ ցուցաբերելով մարդասիրական և ազգասիրական անկեղծ պատրաստակամություն:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՅԱԽՅԻ ՄԱՐԶԻԿԸ՝ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՇՈՒԻՍՏ

Հայաստանի ավանդական ուշուի հավաքականի առաջատար մարզիկ, երիտասարդների աշխարհի չեմպիոն, մեծահասակների աշխարհի առաջնության կրկնակի բրոնզե մեդալակիր եւ Եվրոպայի չեմպիոն Արսեն Բաղրյանը Ուշուի միջազգային ֆեդերացիայի (IWUF) վարկածով օրերս ճանաչվել է 2025 թվականի լավագույն ուշուիստ՝ սանդա մրցածեւում:

IWUF-ի հայտարարության մեջ նշվում է, որ Արսեն Բաղրյանը համարվում է Հայաստանի ամենաուժեղ մարզիկներից մեկը՝ աչքի ընկնելով բացառիկ ֆիզիկական տվյալներով, բարձր կարգապահությամբ եւ օրինակելի մարդկային հատկանիշներով: Նա սկսել է զբաղվել ուշուով վաղ տարիքից եւ իր կարիերայի ընթացքում բազմիցս դարձել է Հայաստանի չեմպիոն, ինչպես նաեւ հաղթանակներ է տարել ազգային, եվրոպական եւ միջազգային մրցաշարերում:

2025 թվականին Արսեն Բաղրյանը նվաճել է Եվրոպայի չեմպիոնի կոչումը, ինչը եւս մեկ անգամ հաստատել է նրա կայունությունն ու բարձր դասը: IWUF-ի կողմից տրված այս ճանաչումը դարձավ փայլուն մրցաշրջանի տրամաբանական եզրակացությունը եւ ամրապնդեց հայ մարզիկի դիրքը՝ որպես համաշխարհային ուշուի առաջատարներից մեկը: Արցախցի մարզիկին հարգում են ոչ միայն հայրենիքում, այլեւ միջազգային հարթակում՝ ինչպես մրցակիցները, այնպես էլ մարզիչները:

Արսեն Բաղրյանը ծնվել է Ստեփանակերտում 2001 թվականի սեպտեմբերի 13-ին: Փոքր տարիքից ավագ եղբոր՝ Աշոտի հետ սկսել է հաճախել ուշուի մարզումների: Ի տարբերություն եղբոր, որը նախընտրեց սիրողական մարզվել, Արսենը ավելի խորն էր ընկղմվել սանդա ուշուի մարզական աշխարհ եւ տարիների ընթացքում հասել լուրջ արդյունքի: 2023 թվականի սեպտեմբերին Արսենն իր հայրենակիցների նման դաժան ճակատագրից խուսափել չկարողացավ. ընտանիքի հետ ստիպված տեղահանվեց Արցախից՝ սրտում կրելով եղբոր կորստի դառը ցավը: Աշոտ Բաղրյանը զոհվել էր բենզինի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով:

Մեզ հետ զրույցում Արսենը ցուցաբերեց մարտարվեստների իրական հետնորդին վայել անկոտրում կերպարի վառ օրինակ, ինչն էլ թերեւս օգնեց նրան չկոտրվել կյանքի դժվարագույն իրավիճակում:

- Արսե՛ն, ինչպե՞ս սկսվեց Ձեր մարզական ճանապարհը, ինչո՞ւ ընտրեցիք սանդա ուշուն:

- Փոքր տարիքում հայրս ինձ ու եղբորս տարավ սպորտով պարապելու, բայց ոչ թե ակնկալելով, որ հետագայում մարզական կարիերա կստեղծենք կամ սպորտային մեծ հաջողություն ու մեդալներ կունենանք, այլ ցանկանալով, որ ֆիզիկապես ուժեղ ու լավ մարզավիճակում լինենք: Մարզվելու ժամանակ ինձ մոտ սեր առաջացավ դեպի սպորտն ու սանդա ուշուն, սկսեցի ավելի ոգեւորված պարապել եւ հասա արդյունքի:

- Բազմաթիվ մեդալներ, պատվոգրեր ունեք, հավանաբար դժվար է առանձնացնել կամ թվարկել բոլորը, այնուամենայնիվ, նշեք սպորտում ունեցած Ձեր ծեռքբերումները:

- 2018 թվականի Եվրոպայի երիտասարդների փոխչեմպիոն եմ, նույն թվականի աշխարհի երիտասարդների չեմպիոն: 2019 թվականի աշխարհի մեծահասակների բրոնզե մեդալակիր եմ: 2024 թվականի Եվրոպայի մեծահասակների չեմպիոն եմ: 2025 թվականի Եվրոպայի մեծահասակների չեմպիոն եմ: 2026 թվականի աշխարհի մեծահասակների բրոնզե մեդալակիր եմ:

- Բոլորը՝ սանդա ուշու մրցածեւում, իսկ երբեւէ մտածե՞լ եք այլ մարզածեւով մարզվելու մասին:

- Անկեղծ՝ ոչ: Երբեւէ ուրիշ մարզածեւով չեմ հետաքրքրվել:

- Արցախից բռնատեղահանվելը ինչպե՞ս անդրադարձավ Ձեր մարզական կարիերայի վրա, ի՞նչ դժվարությունների եք հանդիպում:

- Արցախից տեղահանումը շատ ծանր ազդեցություն ունեցավ թե՛ սպորտային կարիերայիս վրա եւ թե՛ անձնական կյանքում: Շատ դժվարությունների հանդիպեցի՝ կորցնելով հարազատ եղբորս: Բայց ես մտածեցի, որ պետք է շարունակել ապրել եւ իմ ծնողներին ամեն ձեւ ուրախության ու հպարտության պահեր պարգեւել: Շատ դժվար էր, բայց ամեն մի դժվարություն հաղթահարելով՝ նորից սկսեցի մարզվել:

- Միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից տարվա լավագույն ուշուիստ ճանաչվելը ի՞նչ նշանակություն ունեցավ Ձեզ համար:

- Շատ ուրախ եմ դրա համար ու նաեւ շատ ոգեւորված: Լավագույն ուշուիստ ճանաչվելը ավելի շատ է նպաստում թե՛ իմ եւ թե՛ Հայաստանի ուշուի ֆեդերացիայի համաշխարհային ճանաչմանը:

- Ձեր խորհուրդը սկսնակ մարզիկներին՝ ինչպե՞ս դառնալ լավ մարզիկ:

- Խորհուրդ եմ տալիս զերծ մնալ ամեն մի վնասակար սովորությունից եւ դրսեւորել բարձր կամք, չնահանջել դժվարությունների առջեւ եւ հավատարիմ մնալ սկզբունքներին:

Արսեն Բաղրյանի մարզական հաջողությունները ոչ միայն ծեռքբերում են հայկական սպորտի, այլեւ ոգեշնչող օրինակ պատանի սաների եւ ապագա չեմպիոնների համար: Գործադրած ջանքերի եւ անձնվեր աշխատանքի համար շնորհակալանքի է արժանի Բաղրյանի անձնական մարզիչ Վարդգես Մանասյանը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՓՈՔՐ ԹԻՄՈՎ՝ ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔ

Միշտ հպարտանում ենք, երբ հայ մարզիկները միջազգային տարբեր մրցաշարերում դառնում են հաղթող ու Հայոց Եռագույնը ծածանում: Հպարտանում ենք, երբ հնչում է մեր երկրի Օրհներգը: Օրերս նույն հպարտությունն ունեցանք. 2026թ. փետրվարի 20–22-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում՝ Վուրցբուրգ քաղաքում, տեղի ունեցավ ձեռնամարտի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցեց Հայաստանի Հանրապետության թիմը: Փետրվարի 24-ին Գերմանիայից տուն վերադարձան Հայաստանի ձեռնամարտի ֆեդերացիայի նախագահը՝ Զալիկո Համբարյանը, «Մարգարյան մարզական ակումբ»-ի հիմնադիր նախագահ, ձեռնամարտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Վազգեն Մարգարյանը՝ իրենց երկու սաների հետ: Սաներից Տարոն Գնելի Ըռքոյանը, որը բնակվում է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում և «Մարգարյան մարզական ակումբ»-ի սան է, 16-17 տարեկանների խմբում հաղթեց 3 մարտերում և 48 կգ քաշային կարգում դարձավ Եվրոպայի չեմպիոն: Իսկ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի բնակիչ Հրաչիկ Մելոյանը (52 կգ) 14-15 տարեկանների խմբում դարձավ բրոնզե մեդալակիր:

Չարենցավան քաղաքում տեղի ունեցավ մեր մարզիկների դիմավորման արարողություն: Ներկա էին ծնողներ, հարազատներ, չարենցավանցիներ, Տարոնի թիմակիցներ, այլք: Ներկա լինելով ուրախ արարողությանը՝ ընթացքում զրուցեցի ֆեդերացիայի նախագահի, մարզիչի և հաղթանակով վերադարձած մարզիկների հետ: Նշեմ, որ Տարոնն ավագ եղբորս՝ Զավենի թոռն է և մանկուց այցելում էր մարզական ակումբ, ՀՀ-ում և ՌԴ-ում, Վրաստանում մասնակցել է բազում մրցումների սամբո և ձեռնամարտ մարզական ձևերում և գրեթե մշտապես հաղթել է: Մոտ 5 տասնյակ մեդալներ, բազում պատվոգրեր ու դիպլոմներ, գավաթներ ունի: «Մարգարյան մարզական ակումբ»-ի սան է նաև կրտսեր եղբայրը՝ Հայկը, որը նույնպես սիրով է մասնակցում մարզումներին, հպարտանում է եղբոր հաջողություններով և աշխատում է նրանից ետ չմնալ: Չարենցավանի մշակույթի տան միջանցքում՝ Արցախյան գոյամարտում նահատակված չարենցավանցիների

լուսանկարների մոտ Տարոնն ասաց. «Գերմանիայում մասնակցել եմ Եվրոպայի առաջնությանը, հաղթել եմ 3 գոտեմարտում՝ գերմանացի, ռումինացի և մորդովացի մարզիկներին: Հպարտ եմ, որ այսպես դիմավորեցին: Շնորհակալություն իմ մարզիչին ու ֆեդերացիայի նախագահին: Հաղթանակս նվիրում եմ Չարենցավանին ու իմ ազգին, մեր Հերոսներին»: Խոսելով գոտեմարտերի մասին՝ ասաց՝ առավել դժվար էր եզրափակիչը: Իսկ ապագա ծրագրերում աշխարհի առաջնության մասնակցելն է, ուվստահ է՝ դառնալու է նաև աշխարհի չեմպիոն:

Ձեռնամարտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Վազգեն Մարգարյանը ոգևորությունը չէր թաքցնում: Ասաց. «Մինչև 25 տարեկանների Եվրոպայի առաջնություն էր, որը տեղի էր ունենում Գերմանիայի Վուրցբուրգ քաղաքում: Երկու մարզիկ ունեինք, երկուսն էլ մեդալով վերադարձան: Ձեռնամարտի Հայաստանի պատմության մեջ ունեցանք Եվրոպայի առաջնության առաջին չեմպիոնը, որը մեծ հաջողություն է: Տարոնը նաև ՀՀ ձեռնամարտի՝ իր տարիքային կարգում գործող չեմպիոնն է: Հպարտ եմ, որ Չարենցավանից է նա և իմ հիմնադրած «Մարգարյան մարզական ակումբ»-ի սան է: Գերմանիայում կայացածը բարձր կարգի կազմակերպված մրցաշար էր, ու մենք նման արդյունք ունեցանք: Հավատով էինք մեկնել. երկար ժամանակ ու նվիրումով էինք պատրաստվել այս մրցումին»: Խոսելով հաջորդ ծրագրերի մասին՝ ասաց. «Հաջորդ նպատակը աշխարհի առաջնությանը մասնակցելն է: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում բոլոր աջակիցներին, պարոն Գալստյանին, որ մեզ ամեն ինչով աջակցել է: Մեր ֆեդերացիայի նախագահ Զալիկո Համբարյանին, որի շնորհիվ մասնակցեցինք այս առաջնությանը և ունեցանք չեմպիոն: Ծնողներին, համայնքին, որ մեր կողքին են եղել»: Նշեց նաև՝ նույն օրն ունեցել են կրկնակի հաղթանակ. մասնակցել են Չարենցավանում լուսավորման ծրագրի, ու իրենց նախագիծն է հաղթել, որ իրենց սիրելի քաղաքում կկառուցվի մարզական մեծ ու բացօթյա հրապարակ»:

Հայաստանի ձեռնամարտի ֆեդերացիայի նախագահ Զալիկո Համբարյանը Հրաչիկ Մելոյանին պետք է ուղեկցեր Սպիտակ քաղաք: Նշեց. «Մեր հավաքականը բաղկացած էր 15 հոգուց, որ պետք է Գերմանիա մեկնեինք, ցավոք մեկնեցինք 2 մարզիկով՝ հավաքականի գլխավոր մարզիչ Վազգեն Մարգարյանի հետ: Ձեռնամարտի Եվրոպայի լավ կազմակերպված մրցաշարին մասնակցում էին 16 եվրոպական երկրների, այդ թվում՝ Հայաստանի, ընդհանուր 223 մարզիկ: Մենք մեր փոքր թիմով շատ լավ արդյունք ունեցանք»: Անդրադառնալով աշխարհի առաջնությանը՝ նշեց, որ այն կայանալու է Թուրքիայում. «Պատրաստվում ենք հավաքականը մարզել ավելի լավ: Իսկ ապագա նպատակները ձեռնամարտը Հայաստանի Հանրապետությունում տարածելն է, որ մեր երեխաներն զբաղվեն այդ մարզաձևով: Ձեռնամարտը մի մեծ ընտանիք է, որ հնարավորություն է տալիս երեխաներին փողոցից կտրել: Մեր նպատակն է նաև, որ Եվրոպայի, աշխարհի, միջազգային այլ մրցաշարերին փառք ու պատվով մասնակցի մեր հայրենիքը: Աշխատում ենք չեմպիոններ տալ, Եռագույնը ծածանել այլ երկրներում»:

Տուն շտապող Հրաչիկ Մելոյանը նշեց՝ մասնակցել է 3 մենամարտի. առաջինում հաղթել է ֆրանսիացի մարզիկին, միավորների տարբերությամբ պարտվել է ռուսի հետ մենամարտում, իսկ երրորդ տեղի համար մրցումում հաղթել է գերմանացի մարզիկին: Ասաց՝ հաղթանակը նվիրում է հայ ազգին ու իր ծնողներին:

Ջ. ԸՌՔՈՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 28.02 2026.թ.: